

4574

Imp

1885

491-99-8

S-46

2010

SB 2002

995. Մերս - խոնարհութիւն. բառաւ և լոյսով. Մարտի  
չորրորդ ամս. 1885.

Ն. ՅԷՐ-ՉԵՒՈՆԿԵԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Ա.ՌԱԶԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՆՆ Է 35 ԿՈԳ.

ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԿ ՏԻՊ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի վարդանեան

1885

99-8  
5-46

995

C 9PM-K  
995

491.99-8  
S-46

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР


## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆ ԵՒ ՍԷԿԵՐՈՐԴ ՏԻՊ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի Վարդանեան

1885



# ՅԱՌԱՋԱՌԲԱՆ

Մայրենի լեզուի առաջին տարին սովորող անգամ տպագրութեան ենք տալիս: Մտադիր ենք, եթէ հանգամանքները ներեն, առանձին գրքոյկով բացատրել մանրամասնաբար, թէ ինչ ու ինչ փոփոխութիւններ ենք մտցրած սոյն տպագրութեան մեջ, ինչ ուղղութեան ենք հետեւած առհասարակ եւ ինչպէս պետք է գործադրել սրան: Առ այժմ միբանի դիտողութիւններով կըշտանանք:

Մեր դասագիրքը գործածող ուսուցիչը բարոյախօսութեան եւ իրազնութեան դասերը պետք է կցէ լեզուի դասերին: Մեր եղանակի առանձնութիւնը հենց դրա մեջն է. զեւրոպայեան քաղաքացիական պատերազմէն, որի զխառնար առաջին շրջաններէն շեղուելու համար, եւ այդ առաջին անգամ պետք է շեղուելու իւրաքանչիւր դասը, գրքի առաջին եւ երկրորդ շրջաններում (այբբենական մասի մեջ), երեք աստիճան ունի. ա, բարոյախօսութեան, բ, իրազնութեան, գ, կարգաւարտութեան. վերջին աստիճանը, իւր կարգին, որպէս լեզուի դասերի հիմք, ունի չորս ստորաստիճաններ՝ ա, վերլուծութիւն առարկայի մասին, բ, հնչեղանքներ: համեմատութիւն, գ, ծանօթ հնչիւններ անծանօթ բառերում, դ, շեղումներ:

Սոյն նպատակով, այբբենական մասի մեջ, իւրաքանչիւր դասի համար դրել ենք մի պատկեր, որ բարոյակրթութեան եւ իրազնութեան նիւթն է ամփոփում մեզը—իհարկէ որքան հնարաւոր է մի ուրուագծի մեջ ամփոփել այդ ամենը: Պարզ գրագիտութիւնը, այսպիսով, կորցնում է իւր չորս ու ցամաք կերպարանքը եւ գուրակցում է այնպիսի վարժութիւններին, որոնք թէ գրանում են մանուկներին եւ թէ զարգացնում:

Հասկանալի կացուցանելու համար, կըդնենք մի դաս իւր մանրամասնութիւններով:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

49816-աի

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Мая 1885 г.  
Тип. М. Вартамянца. Троиц. переул. д. № 11.



36385-66

Շուն

1. Բարոյախօսական դաս.

Մի շուն կար: Մի օր այս շունը՝ մի կտոր միս բերանին, պիտի անցկենար կամուրջով: Անցկենալիս ցած նայեց ջրին և տեսաւ, որ մի ուրիշ շուն գնում է ջրի միջով՝ բերանին բռնած մի մեծ մսի կտոր: Շան ագահութիւնը շարժուեցաւ. նա կլանչեց ու ցած թռաւ կամուրջից և կամեցաւ միւսի ձեռքից խլել մսի կտորը:

Բայց ի՞նչ. ցած թռչելիս՝ իր բերանի կտորը վեր գցեց՝ ջուրը տարաւ. ջրի մեջն էլ ոչ շուն գտաւ, ոչ միսի կտոր. կենդանին խաբուել էր իր ստուերից: Ագահութիւնը զրկեց նրան իր ունեցածից:

2. Իրազննական դաս.

Ջրուցատրական մեռով եւ հետեւեալ հարցմունքների միջ-  
նորդութեամբ ծանօթանալ շանը—  
—  
—

—Ո՞րտեղ է ապրում շունը: Ի՞նչ է ուտում նա: Շանը ի՞նչպիսի կենդանի էրեւել է անուանել ապրելու տեղին նայելով: Իսկ կերածին նայելով, քանի մասից է կազմուած շան մարմինը. ո՞րոնք են այդ մասերը. շան գլխի վրայ ի՞նչ ենք տեսնում. գլուխն ինչո՞վ է միացած բնի հետ. ի՞նչպիսի բուն ունի շունն. յետեւ շունն ի՞նչ ունի. ի՞նչպէս կանուանենք շան ստորին մասերը. քանի ոտն ունի նա. ի՞նչ մասերից են կազմուած ոտները: Իւրաքանչիւր թաթի վրայ քանի մատն ունի. ի՞նչով են զինուած մատները. ոտներին նայելով շունն ի՞նչպիսի կենդանի է ասվում: Ինչի՞ ենք մենք վախենում շանից. ի՞նչով է կծում նա. քանի ժանիք ունի:

Ջրուցատրութեան արդիւնքը պիտք է մտաւորապէս հետեւեալը լինի.

«Շունն ապրում է տանը. նա ուտում է հաց և կաթ, բայց՝ աւելի սիրում է միս.—նա ընտանի մտակեր կենդանի է. Շան մարմինը կազմուած է չորս մասից՝ գլուխ, պարանոց,

բուն, ոտներ: Շան գլխի վրայ մենք տեսնում ենք՝ բերան, քիթ, աչքեր և ականջներ: Շան գլուխը միացած է բնի հետ պարանոցով. նրա բունը կոլոր է. բնի յետեւը նա ունի երկար պոչ: Շան ստորին մասերը կոչվում են ոտներ. նա ունի չորս ոտը. իւրաքանչիւր ոտը բաղկացած է երեք մասից՝ ազդր, ոլոզ և թաթ. ամեն մի թաթի վրայ չորս-չորս մատներ ունի, որոնք զինուած են սուր-սուր եղունգներով—ճանկերով: Ոտներին նայելով շունը չորքոտանի կենդանի է կոչվում: Իւր սուր ժանիքներով շունը կծում է մարդկանց՝ զրա համար էլ նրանից վախենում ենք: Շունն ունի երկու ժանիք իւրաքանչիւր ծնօտի վրայ:

3. Կարգալ-գրեյ, որ ունի երեք ստորաստիճաններ.

ա. վերին—  
—  
—

—Մենք ի՞նչ զննեցինք, Հայկ: Մենք զննեցինք շունը իբրև առարկայ, իսկ այժմ կըքնենք նրա անուան—  
—  
—  
բառ: Իբրև առարկայ զննելու միջոցին, մենք նայեցինք շան վրայ, մենք դիտեցինք նրան աչքերով. ուրեմն զննութիւնը կատարեցինք տեսանելի միջնորդութեամբ: Իսկ այժմ շունը չեղայ այլևս. մենք կամենում ենք խօսել նրա անուան—  
—  
— բառի վրայ: Արդեօք առարկայի անունը նոյնպէս կարելի է քննել տեսողութեան միջնորդութեամբ: Աւրեմն ի՞նչպէս կամ ինչի՞ միջնորդութեամբ զննենք շունը բառը:

—Ա՛յ ինչպէս: Երբ մենք զննեցինք շանը իրան, նա մեր աչքի առաջն էր: մենք նրան տեսնում էինք աչքերով. իսկ այժմ շան հետ էլ մենք գործ չունինք. այժմ միայն պէտք է իմանանք, թէ ինչպէս է շինուած շունը բառը. իսկ այդ իմանալու համար պէտք է լաւ լսենք.—  
—  
— շ շ շ ու ու ու ն (կրկնում է մի քանի անգամ): Աւրեմն առարկան զննեցինք աչքով, իսկ բառը—պիտի զննենք ականջով. Դէ՛հ ականջներդ լաւ սրեցէ՛ք և ինչ որ կ'ասեմ, լաւ լսեցէ՛ք.—  
—  
— շ շ շ (կպցնում է հնչիւնը միմեանց առանց և տառի օգնութեան և արտասանում է նրան առաջինի արանքից): Բոլոր բանն ասացի. Պե՛տրոս, ասա՛ միւսնոյն հնչիւնը: Սարգիս, դու ասա՛. Ա՛րամ,— դու . . . Ասացէ՛ք ամենքդ խմբովին: Այժմ լա՛

լսեցէ՛ք. կարող եմ բաց բերանով և պարզ ու երկար ձայնով արտասանել այդ հնչիւնը: Փորձենք (փորձում է և փորձել է տալիս): Ուրեմն շ խուլ ձայն է. նա դժուար է ասվում:

Աւ. լսեցէ՛ք այժմ:

Շ ու ու ու: Այժմ բոլոր բանն ասացի:—Ո՛չ. կէսը միայն երկու մասը, երկու հնչիւնը: Այժմ դու ասա՛, Հայկ. դու, Կարապետ. ամենքդ միասին ասացէ՛ք: Վարդան, ասա՛ առաջին հնչիւնը. Արամ, ասա՛ երկրորդը. Մկրտիչ, կրկնիր երկուսն էլ. ձգիր մինը միւսի յետևից. այժմ կարճ ասա՛, Լաւ. Հիմա լսեցէ՛ք. դուք տեսնում էք: որ երկու հնչիւնը կարելի է ձգած ասել—շ շ — — — և կարելի է—կարճ ասել—շ—:—Այժմ դու, Յովհաննէս, ձգիր հնչիւնները միմեանց յետևից. ասա՛ նրանց կարճ՝ կպցրած:—Մինաս, ասա՛ միայն առաջին հնչիւնը: Մկրտիչ, դու երկրորդն ասա՛: Յուլի, ասա՛ երկրորդը, յետոյ առաջինը, ձգիր, կպցրո՛ւ: Ասացէ՛ք միասին երկրորդ հնչիւնը, ապա առաջինը. ձգեցէ՛ք այժմ կարճացրէ՛ք. ի՞նչ ստացանք—շ—շ. ի՞նչ է նշանակում —շ:

Այժմ լսեցէ՛ք նորից. շ ու ն ն ն: Հիմա բոլոր բառը ձգեցի, թէ էլի բան մնաց:—Բոլորը:—Ուրեմն քանի ձայն կայ շ—ն բառում: Ասա՛, Արամ, առաջինը. դու, Կարապետ, երկրորդն ասա՛. ձգիր, այժմ կպցրո՛ւ: Մինաս, ասա՛ երրորդը, երկրորդը, առաջինը: Հայկ, ձգիր Մինասի ասած բոլոր հնչիւնները երկար, կրկնեցէ՛ք ամենքդ. այժմ կարճացրէ՛ք. ի՞նչ ստացանք, Գարեգին:—(նուշ): Ի՞նչ է նշանակում —շ:

Բ. Հնչիւնների համեմատութիւնը.

Այժմ քննենք ամեն մի շնչիւնը առանձին:

—Քանի հնչիւն կայ շ—ն բառի մէջ, Ո՞րն է առաջինը, ո՞րն է երկրորդը, երրորդը:—Այդ ձայներից ո՞րն է աւելի պարզ ասվում, իսկ ո՞րն է խուլ ասվում:

—Լաւ. ուրեմն — պարզ է ասվում, նրան կարող ենք հեշտօրէն ձգել—արտասանել. նա որոշ ձայն ունի. իսկ շ և ն խուլ ձայն են հանում, նրանց հեշտութիւնով ձգել, պարզ աւ բարձր արտասանել չենք կարող. նրանք շ—ն են ասվում, կասես թէ խեղդվում են ատամներիդ մէջ:

Ուրեմն այդ հնչիւններից մէկին մենք կանուանենք ձայն տւնեցող—յայտարար, իսկ միւսներին կանուանենք ձայն չունեցող—բողոքային:—Ո՞րին կանուանենք ձայնաւոր հնչիւն, Գարեգին. իսկ ո՞րոնց ենք ասում բաղաձայն հնչիւնների, Հայկ: Ասացէ՛ք ամենքդ ձայնաւոր հնչիւնը. այժմ առաջին բաղաձայն հնչիւնը. —այժմ վերջինը: (Ուսուցիչը պէտք է աշխատէ, որ շ և ն հնչիւններն արտասանելիս շ ձայնը չըկպցնեն նրանցից, այլ արտասանեն ատամների մէջ. ն հնչիւնը պէտք է արտասանել երկու շի մէջ, միայն առանց շ-երի ձայնը զգալի կացուցանելու. միևնոյնը պէտք է իմանալ և միւս բաղաձայնների համար այսուհետև):

գ. Ծանօթ հնչիւնը անձանօթ բառերի մէջ.

Այժմ լսեցէ՛ք, տղայք, թէ ինչ բառ կ'ասեմ ձեզ. — Ծանօթ: Ի՞նչ բառ ասացի, Կարապետ, Կրկնիր, Մկրտիչ. . .

—Այժմ մտածեցէ՛ք, թէ այս բառի մէջ չոկայ արդեօք ձեզ ծանօթ հնչիւններից. ո՞րն է, Յովհաննէս. Իսկ կո՞ւ բառի մէջ ի՞նչ ծանօթ հնչիւն կայ: Ի՞նչ ծանօթ հնչիւն կայ էլ բառի մէջ. իսկ —ն, —ն, —ն. . . (Այս բառերից իւրաքանչիւրը հարցնել պէտք է պատշաճաւոր ընդարձակութեամբ՝ մէկին ու միւսին, բայց առաւելապէս թոյլերին, և վերլուծել տալ որ աշակերտները որոշեն իրանց ծանօթ հնչիւնները անծանօթներից: Երբ թոյլերը կը հասկանան այս տեսակ բառախնդիրներ լուծելու գաղտնիքը և կը կատարեն նրանց բաւարար կերպով, այդ նշան է, որ ամենքը լաւ են հասկացել):

—Ո՞վ է կարող իրանից այնպիսի բառ ասել որի մէջ չիւնի — հնչիւնը. Ասա՛, Հայկ. դու ասա՛ մի ուրիշը, Գարեգին. Մտածեցէ՛ք այնպիսի բառ, որի մէջ լինի շ հնչիւնը. . . Այժմ այնպիսի բառ գտէք, որի մէջ լինի ն հնչիւնը:

—Լաւ. Հիմա կրկնենք բոլորը. քանի՞ հնչիւն գիտենք մենք. ինչպէ՞ս անուանեցինք — ձայնը. ի՞նչպէս ենք անուանում շ և ն. ինչի՞ ենք այդպէս անուանում. ի՞նչ կըստանանք, նանք, եթէ ձգենք միմեանց յետևից — և շ: ի՞նչ կըստանանք, եթէ ձգենք շ և —, իսկ եթէ կպցնենք. Ի՞նչ կըստանանք եթէ ձգենք — և ն. եթէ կպցնենք. ի՞նչ կըստանանք, եթէ ձգենք ն

... 2. իսկ երբ կայնենք. ի՞նչ է նշանակում նա: Բանք բառ կարող ենք կազմել 2, ... և տաներից (երեք—ուշ, շունչ—ուշ —ուշ — նուշ):

դ. Գրեյու վարժարան. Հարկաւ ուսման առաջին շաբաթներն ուսուցիչը աւանդած կըլինի մանուկներին այն տարրական տեղեկութիւնները, որոնք անպայման պետք է նախորդեն բոլոր այստեղ դըրած վարժարաններին. աշակերտներն այս վարժարաններն սկսելուց առաջ, գործնականապէս պիտի ծանօթացած լինին, քի ինչ է՝ վերաւը, ներքեւը, ձեւերը, առաջնը, ձեւերը, վերջնը, ուր յիշել, որչիշ, ինչը, ձեւը, շարքը, որչիշ, վերջ, շարք, ձեւերը, ցածրը, բարձրը—բառերը: Այնուհետեւ, երբ աշակերտներն սկըսում են մեր առաջարկած վարժարանները, (որոնք, պարտք ենք համարում շէշտել, դեռ եւս կարդայու վարժարաններ ջեն, այլ նախապատրաստութիւններ) եւ անցնում են գրութեան, ուսուցիչը պատուիրում է մանուկներին, որ հանեն իրանց քարտախտակները: Մանուկները քարտգրիջ բունել գիտեն արդէն. նրանք գիտեն աջը եւ ձախը, վերը եւ վարը... Ուսուցիչը մօտենում է գրատախտակին եւ նախ օղի մէջ ապա տախտակի վրայ քաշում է մի կարգի քիշ \*):

Յետոյ հասկացնելով մանուկներին, քի ինքն ինչպէս սկըսեց գիծը, ինչպէս վերջացրեց, պատուիրում է աշակերտներին գրել միեւնոյն գիծը իրանց քարտախտակների վրայ, ինքը անմիջապէս առաջնորդելով բոլորին եւ բոլր մատներ ունեցողներին:

Սոյն մեռով պետք է անցնել եւ մնացած դասերը՝ էշ, որչ բար, հաւ, ջի, կարտ, որչի, ձեւը, ճանճ—բոլորը, նախընթա-

(\*) Այս եւ հետեւեալ դասերի ժամանակ գրութեան վերաբերութեամբ առաջնորդ ունենալու է պ. Մակար Տէր—Սարգսիտանի «Գեղարդութեան օրինակները», որի առաջին երեսի տասը վարժութիւնները յաջորդաբար պէտք է աւանդուին մեր ձեռնարկի նախապատրաստական տանջ վարժութիւններն անցնելու ժամանակ:

ցի հետ, 10. դաս: Մեր բացատրական մեռնարկի մէջ (62—85 երես) ուսուցիչը բաւական տեղեկութիւններ կըգտնի այս դասերի աւանդման մեռի մասին, քի նեղութիւն կրէ առաջնորդ ունենայ նրան: Այնտեղ պակաս է միայն բարոյակրթական նիւթը, որը մենք խոշոր տառերով գետեղած ունինք դասագրքիս զանազան երեսներում, աշակերտներին ապագայում կարդացնելու համար: Այս առաջին աստիճանի բարոյախօսական նիւթն է՝ որչ շարք (երես 3), էշ (6), որչ ու բար (14), հաւ եւ կարտ (18), ձեւը եւ ջի (24), կարտ (11), որչ եւ ճար (32), ձեւը ու ճանճ (35),—բոլորը գրքի երկրորդ մասի մէջ:

Սոյն սկզբնական վարժարանների եւ դասերի ժամանակ մանուկներին, ի հարկէ, գիրք չի տրվում, որովհետեւ դեռ տառագիտութիւնը չի սկսուած, այլ գործ ունինք միմիայն հնչիւնների հետ: Երկրորդ աստիճանին (տառագիտութեան) անցնելով ուսուցիչը կրկնում է աշակերտների հետ միեւնոյն բարոյակրթական եւ իրազնական դասերը՝ ինչ ընդարձակելով եւ ապա անցնում է տառագիտութեանը նոյն մեռով, ինչպէս աւանդել էր հընչիւնները նախընթաց աստիճանն անցնելիս: Այս մասին եւս բաւական տեղեկութիւններ կան մեր բացատրական մեռնարկի մէջ (երես 85—107) որով կարող են օգտուիլ ուսուցիչները, մինչեւ որ մենք, ինչպէս խոստանանք վերը, կըտանք նոր բացատրական մեռնարկ այն փոփոխութիւններին համեմատ, որոնք մտած են այս տասնութերորդ տպագրութեան մէջ: Բացատրական մեռնարկը ցանկացողներին ճրի է տրվում առայժմ:

ՄԱՍՆԱԻՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻԻՆՆԵՐ.

(Այբբենական մասի վերաբերութեամբ)

Դաս 1. շարք բառի մէջ որ պէտք է ընդունուի որպէս մի տառ, որովհետեւ մի պարզ ճնչիւնի նշանագիր է:

Դաս 8. որչ բառի մէջ որ թէեւ բարդ ճնչիւնի նշանագիր է (էշ), բայց պէտք է հասկացնել մանուկներին, որ բառի սկզբում ձե-



հնչիւնի համար կայ մի նշանագիր—«—եւ ոչ թէ երկու: Ծանուկները  
զիտեն — եւ օ. գուցէ նրանք » բարդ հնչիւնը կազմեն այսպէս՝ «—  
պէտք է հասկացնել մանուկներին, որ բառի սկզբումը — տառը չի կա-  
րող գրուիլ:

Դաս 9. Այս դասի մէջ է-ի եւ է-ի տարբերութիւնը պէտք է  
հասկացնել. այդ տարբերութիւնը բառի սկզբում շատ որոշ է, իսկ բա-  
ռի մէջը համարեա աննշմարելի: Այնուամենայնիւ սկզբումը բառի  
մէջն էլ նրան փոքր ինչ թանձր հնչելու է, քան թէ լերկ է հնչիւնն է:

Դաս 11. « եւ օ տառերի զուգահիստութիւնը բառի սկզբում եւ  
մէջը: Բառի սկզբում նրանք պահում են իրանց հնչիւնը, իսկ բառի  
մէջը կարդացվում են միապէս:

Դաս 12. Բարդ տառեր: Այդ դասի ժամանակ միայն պէտք է  
ցոյց տալ մանուկներին. 1. որ «— պարզ հնչիւնի նշանագիրը բարդուած  
է երկու տառից, որոնք առանձնանալով, բոլորովին տարբեր հնչիւն  
ունին—», — 2. որ է եւ — (եւ) տառերը ծուլելով կազմել են Լ նշա-  
նագիրը, որը մի տառ լինելով, երկու հնչիւն է ամփոփում իւր մէջ:  
բոլորովին տարբեր «—ից, որ երկու տառ լինելով, մի հնչիւն էր  
ամփոփում. 3. որ՝ ճ կիսով չափ բարդ հնչիւնն արտայայտելու համար  
միանում են է եւ «— տառերը եւ կազմում են է—ճ:

Դաս 13. Մինչեւ չէ դասը մենք զխտառներ չենք տալիս. այս  
դասի մէջ առաջարկուած են բոլոր զխտառների համար յատուկ ա-  
նուաններ:

Դաս 14, 15, 16. Միավանկ եւ բազմավանկ բառեր—տառ եւ  
վանկ:

Դաս 17. Նուագական եւ փաղաքշական մասնիկներ—ւ, էէ,  
ոււ, էււ:


Դաս 18, 19. Գլխաւոր առարկայ եւ դարձողութիւն—ժողո-  
զորձողութեան երկու ձեւը՝ «յժ» եւ «յժո»:

Յաջորդ դասերի վերաբերութեամբ մենք աւելորդ ենք համա-  
րում ծանօթութիւններ դնել. ուշադիր ուսուցիչը, յուսով ենք, իւրաքան-  
չիւր դաս մասնաւոր գիտողութեան կ'ենթարկէ եւ կրօնանէ թէ ինչ ու  
ինչ ունի աւանդելու մանուկներին:




Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

# Չ Բ Զ Ա Ն Ա Ռ Ա Զ Ի Ն




# 1. շուՆ

ու, շ, ն, նու, ուշ, նուշ:



## 2. էշ

է, ու, շ, ն. էն, ուշ, նուշ,  
շուն, շէն. էշ ու շուն:




## 3. սազ — ս, ա, գ.

էս, սա, էն, նա. էս, էշ, գէս, գէշ, սէգ, սուգ,  
սուս, սա, սաս. էս շուն է. սա սազ է. էն նուշ է:

## 4. բաղ — բ, գ.

էս, սա, էն, նա, էգ, դա, դու, բու.  
բուն, բան, բաղ, բաղ, բաշ, դաս, գուբ.  
բաղ ու սազ. դա բաղ է. նա սազ է:



### 5. Հաւ — Տ, Լ.

հա, հաւ, հա, հաւ, բա, բաւ, դա, դաւ, ահ,  
 շահ, սահ, գահ, բահ, հունդ, գունդ,  
 հանդ, սանդ, բանդ. սադ ու բադ. բադ  
 ու հաւ:



### 6. օճր — օ, ձ, ը.

դու, ձու, սադ, ձադ, զանձ, սանձ, հունձ,  
 օշ, օն, օդ, ձին, հար, բար, շուն, սագր,  
 էր, օճր:



## 7. կատու

գ, կ, տ. տուն, տան, տանձ, տատ, տուտ,  
 շուտ, կուտ, տակ, կէտ, կէս, շէկ, կաւ, նաւ,  
 գըղակ, գընդակ, կըտաւ, դանակ, նաւակ.  
 օգուտ, տաշտակ, հաւատ, սահուն:



## 8. ողնի

ո, օ, ի, զ, ս, շ. ոտ, ոստ, տիկ, տակ, ձի, ձիգ,  
 ձագ, զատ, զուտ, ազգ, կուզ, դէզ, սէզ.  
 ոսկի, ոտիկ, ոստիկ, ոզի, ազի, զատիկ,  
 զաւակ, կաշի, անզին, տիկին, ընկուզ,  
 աւազ:



## 9. մեղու — ւ, մ, ղ.

եղ, եզ, եկ, ես, եւ, եմ, են.

էդ, էն, էշ, էգ, օղ, ող.

նեղ, նեա, մեղ, մեզ, զեղ, զեա.

մէկ, շէկ, կէտ, կէս, սէգ, տէգ, մէգ.

աղ, մաղ, մատ, մազ, կաղ.

եղնիկ, եղան, սեղան, ասեղ, ուղիղ, ուղեղ.

## 10. ճանճ — ճ.

ճուտ, ճիտ, ճաշ, ճանկ, ճիւ, մաճ, ճիշտ.

տաճիկ, ճիճու, ճակատ, ճրնճ-ղուկ.

մաշիճ, ճաշիճ, կաւիճ, ճօճանակ:

## 11. ո, օ.

ոտ, ող, ոճ, ոգի, ոսկի, ոստիկ.

օղ, օղ, օ՛ն, օ՛շ, օգուտ, օղակ.

մոմ, գոմ, գող, դող, տող, հող, հոտ.

հօտ, ճօճ, գօտիկ, կօշիկ, ճօճանակ:

## 12. ու, ւ, եա.

ո, ւ—ու, ուշ, շուն, բուն, տուն, կուտ.

ե, ւ—ել, ւ, սել, սև, կեղել, կեղև.

ե, ա—եա, սենեակ, մանեակ, հոգեակ.

ես ունիմ մէկ տուն.

տունն ունի տասը սենեակ.

շուշանն ունի գեղանի մանեակ.

ոսկանը կրգնէ մի տասնեակ մատիտ.

նա տեսաւ սև օճի կաշին.

ա, է, ե, ի, ը, ո, օ. ու, եա.
շ, ն, ս, գ, բ, զ, հ, ւ,
ճ, կ, տ, զ, մ, ղ, ճ, և.

### 13.

Ա, Ե, Ո, Ը, Է, Ի, Ս, Ն, Մ, Ղ, Բ, Գ,  
 Դ, Կ, Ճ, Շ, Զ, Հ, Տ, Ի, Զ. Աստղիկ, Եղիշէ,  
 Ոսկան, Ընձակ, Է՞, Իսկուհի, Օջան, Սաջակ,  
 Նունէ, Մուշեղ, Ղևոնդ, Բարբիկ, Գաղիկ,  
 Դատ, Կոստանդին, Ճանիկ, Շուշանիկ,  
 Զատիկ, Տաճատ, Համբօ, Զուրիկ:

### 14.

Կուտ	Սազ	Նետ	Զու
Նուշ	Բազ	Մատ	Զազ
Շուն	Բան	Կէտ	Ճաշ
Տուն	Դու	Մուկ	Սան
Նաւ	Դա	Մազ	Կին

Կաւ	Դաս	Տաղ	Ոտ
Կէս	Եղ	Տէղ	Ճուտ
Տիկ	Աղ	Գող	Էշ

### 15.

Կատու	Ոսկան	Աոտ
Դանակ	Կաշի	Մեղու
Անուշ	Շամամ	Զատիկ
Օղակ	Հասակ	Նաւակ
Անուն	Գաղան	Ճակատ
Ուղիղ	Զաւակ	Հողեակ
Ուղեղ	Ասեղ	Սէնեակ
Ոսկի	Մուշեղ	Մանեակ

### 16.

Շուշանիկ	Գանձանակ	Աւազաման
Անուշիկ	Աղանի	Անուշաւան
Աւետիս	Ճօճանակ	Աղանետուն
Կոստանդին	Աղգական	Մամիկոնեան
Մամիկոն	Եղենի	Օջանիսեան

17.

Շուն—շնիկ	Էշ—իշուկ
Սան—սանիկ	Տուն—տնակ
Ոստ—ոստիկ	Բուն—բնակ
Անուշ—անուշիկ	Նաւ—նաւակ
Մանուկ—մանկիկ	Հոգի—հոգեակ
Աստղ—աստղիկ	Աղաւնի-աղաւնեակ:

18.


Բամբակը բուսնում է:  
 Ճօճանակը ճօճում է:  
 Մողեսը սողում է:  
 Սաճնակը սաճում է:  
 Դուկասը շինում է:  
 Մոսէսը կասում է:  
 Սիմոնը տանում է:  
 Սմբատը տեսնում է:  
 Շուշանիկը մանում է:

19.

Բամբակը կրբունի:  
 Սաճնակը կըսաճի:  
 Սիմոնը կըտանէ:  
 Մոսէսը կըկասէ:  
 Դուկասը կըշինէ:  
 Սմբատը կըտեսնէ:  
 Շուշանիկը կըմանէ:  
 Ճօճանակը . . . .  
 Մողեսը . . . .



ՀՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ



20. Կալ—Լ, Լ.

Նալ,	Լող	Լորի	Լուանալ
Բալ,	Լոկ	Լուսին	Լաւանալ
Սալ,	Ուլ	Լեզու	Մօտենալ
Տալ,	Կուլ	Լեզակ	Կամենալ

Լաւ,	Գալ	Աղալ	Ունենալ
Լու	Լալ	Լճակ	Օգնել
Լաստ	Տալ	Լեղի	Մանել

21. ցորեն—ց, բ, Գ.

Հաց	Կացին	Կերակուր
Ցից	Կարկուտ	Կարկատան
Ցին	Ճագար	Դատաւոր
Ցաւ	Ցերեկ	Գարեգին
Սար	Ցօղուն	Արտուտիկ
Ճար	Ցուցակ	Դաշտեցի
Սուր	Կարաս	Սարեցի
Գիր	Կորեկ	Տանըցի
Կիր	Գարի	Գեղեցիկ


22. յարդ—յ, Յ.

յարկ, յարգ. համր, յամր. յետ, հետ.  
 համար, յամառ. յատակ, հատիկ, յատուկ.  
 յիսուն, յետին, Յիսուս, յուսալ, յարգել:





Փարմ կաթը բերեց ճերուկը:  
 Լուսիկը կապեց սիրուն գոգնոց:  
 Նազելին կարեց ճերմակ հալաւ:  
 Ռուբէնը կարմիր մատիտ գնեց:  
 Արուսեակը գործեց մանրիկ սփռոցներ:



25. ոչ խար — չ, խ. 2, Խ.

Խոտ	Խունկ	Խմոր	Խաշխաշ
Խաչ	Շունչ	Գրիչ	Խաղող
Խակ	Չուխ	Խրատ	Չամիչ
Չար	Փուչ	Խրամ	Խաւար

Ճար	Չափ	Խմել	Խնդալ
Խոր	Չար	Խլել	Չարչարել
Չոր	Չոփ	Բրիչ	Չարասիրտ
Խոզ	Մեխ	Խն-ձոր	Խաչատուր
Խոց	Խաւ	Խն-դիր	Մըկըրտիչ

26. մաքի — ք, ֆ.


Կար	Մարի	Քաթան	Մատանիք
Գար	Մատակ	Քաղաք	Աղաքար
Քար	Մէրուն	Քացախ	Աքաղաղ
Քիթ	Մաքի	Քարտաշ	Քարաչէն
Քիչ	Քեռի	Քերոք	Քարասիրտ
Քուրք	Քանոն	Քրիստոս	Քրիստապիոր
Սարք	Քամի	Մաքուր	Քաղաքացի

27. Գուր — ջ, 2.

Աջ	Չորի	Չուլհակ
Էջ	Չրհոր	Գարեջուր
Մէջ	Ականջ	Չըր-կիր

Գաջ	Զաղաց	Զրն-ջան
ԶաՏ	Բանջար	Զանիկ
Զուխա	Սնճար	Զաւահիր
Շունչ	Զուլթակ	Զրաբերդ

Սագ	—	Սագեր	—	Սագ էր.
Հաւ		Հաւեր		Հաւ էր.
Բագ		Բագեր		Բագ էր.
Նաւ		Նաւեր		Նաւ էր.
Ծառ		...		...
Մաղ		...		...
Շոր		...		...
Հաց		...		...
Ուղտ		...		...
Զուր	—	Զրեր	—	Զուր էր.
Գիր		Գրեր		Գիր էր.
Շուն		...		...
Տուն		...		...
Սուր		...		...
Թուր		...		...
Թուփ		...		...
Թուշ		...		...



# 28. Կով — վ, վ.

Վար, վառ, վատ, վարդ, վեգ, վեճ,  
 վեց, վուշ, Վարդան, Վասակ, Վահան:  
 Կաւ, հաւ, նաւ, ցաւ, սեւ, թեւ, թիւ,  
 անիւ, ազնիւ, կռիւ, արծիւ:  
 Կով, հով, նով, բով, սով, բարով, տարով,  
 օրով, ցերեկով, գիշերով, աշխատանքով:  
 Որդի, ոսկի, ոգնի, ոստիկ, ոգի, որոճ,  
 որկոր, որսորդ, ոչինչ, որմիկ, Ոսկան:  
 Սւազ, գաւակ, նաւակ, աւազ, հաւատ,  
 թաւիշ, կաւիճ, գաւաթ, գաւիթ, ա-  
 ւազան, թագաւոր:

# 29. պանիր — պ, Պ.


Պար	Կարապ	Պանդոկ
Պատ	Կապիկ	Պարապ
Պարկ	Կապուտ	Վարպետ
Պինդ	Կարազ	Կապերտ
Պիղծ	Ապրուտա	Կարապետ
Սեպ	Լապտեր	Վարդապետ
Կապ	Պաշար	Պատարապ
Պօղ	Պետրոս	Պապիկ

# 30. իւղ

Ճիւ	Իւր	Գիւղական	Թիւր
Թիւ	Թիւր	Աղիւսակ	Թիւն
Անիւ	Արիւն	Բարութիւն	Անիւր
Աղնիւ	Աղիւս	Չարութիւն	Անիւն
Արծիւ	Ալիւր	Օգնութիւն	Արծիւն
Կռիւ	Աղբիւր	Աղբիւրակ	Պատիւն
Պատիւ	Կորիւն	Սառնարիւն	Կռիւն



БИБЛИОТЕКА  
 ИНСТИТУТА  
 ВОСТОКОВЕДЕНИЯ  
 Академии Наук  
 СССР



31. փիղ—Ֆիլ, ժանիք.

փ, ֆ, ժ. ֆ, Ֆ, ժ.

Փիղ — Ֆիլ	ժամ	ժառանգ
Փլաւ — Ֆիլաւ	ժիր	ժողով
Նաւթ — Նաֆթ	Կուժ	Բժիշկ
Փուրզոն-Ֆուրզոն	ժանգ	Սրժան
Մափրաշ Մաֆրաշ	Ուժ	Սժան
Քէփ Քէֆ	Բաժակ	ժպիտ
Փէս Ֆէս	Բաժին	Պատիժ

Փիղը ժանիքով պաշտպանում է իր անձը:  
 Բժիշկը բաժակով դեղ տուեց հիւանդին:  
 Փամազօրծը ֆուրգոնով տեղափոխեց ապրանքը:  
 Ֆէսաւօր մարդը փողոցներում նաւթ էր վաճառում:  
 Նաւթը շատ աժան վառելիք է:

Աշակերտը գրում է դասը գրչով:  
 Դերձակը շորերը ասեղով է կարում:  
 Պառաւն իրիկով թել է մանում:  
 Տանտիկինը կաթնից պատրաստեց իւղ:  
 Խոհարարը մսից կերակուր եփեց:  
 Հեղինէն փող տուեց աղքատին:  
 Հեղինէն աղքատին փող տուեց:  
 Աղքատին Հեղինէն փող տուեց:  
 Փողն աղքատին տուեց Հեղինէն:  
 Մանուկը պատիւ է տալիս ծերին:  
 Կովն արածում է դաշտումը:  
 Մանուկը խաղաց պարտիզումը:  
 Պօղոսը կարգում է ուսումնարանումը:

Չաւակ	— զաւակներ	— զաւակն էր:
Ոսկի	— ոսկիներ	— ոսկին էր:
Ողնի	— ողնիներ	— ողնին էր:
Կատու	— . . .	— . . .
Յօրեն	— . . .	— . . .
Ոչխար	— . . .	— . . .
Մատիտ	— . . .	— . . .
Գրիչ	— . . .	— . . .

Գնդակ — . . . — . . .  
 Դանակ — . . . — . . .  
 Ասեղ — . . . — . . .  
 Ծիծեռնակ — . . . — . . .  
 Կերակուր — . . . — . . .

### 32. —յ, Յ.

...	բ.	գ.	դ.	ե.
Յարկ	Ա՛յ	Գաթայ	Մայր	Քոյր
Յարդ	Է՛յ	Կաթսայ	Հայր	Ծոյլ
Յարդ	Վայ	Քաջանայ	Այծ	Թոյլ
Յամբ	Հայ	Ծառայ	Կայծ	Յոյս
Յետ	Բայ	Փեսայ	Այր	Բոյս
Յատակ	Օ՛յ	Տեսայ	Այրի	Լոյս
Յամառ	Նոյ	Յետոյ	Այգի	Աշխոյժ
Յունապ	Թէյ	Երեկոյ	Եղբայր	Պարոյր
Յուլոպ	Հէյ	Մօտոյ	Գայլ	Վրոյր

Յիսուսն օրհնեց բարի մանուկներին:  
 Մարգիկ չէն յարգում յամառ տղաներին:  
 Հայրս հրաւիրեց ծերունի քաջանային:  
 Կայծը հրդեհեց խոտի գէղը:  
 Գայլը պատառոտեց այծի ուրբը:  
 Այս երեկոյ այգում թէյ կըխմենք:

Մայրս մեզ գաթայ կըտայ, կ'ուտենք:  
 Այրի կինը այծի կաթն էր ծախում:  
 Վայ նրան, ով հայր ու մայր չունի:  
 Քոյր ու եղբայր աշխոյժ կերպով խաղում էին  
 բոյսերի մէջ:  
 Ծոյլ տղան իւր յոյսն ուրիշների վրայ է գնում:

### Ա Ռ Ա Ի Օ Տ

Լուսացաւ, լուսացաւ,  
 Լուսն է բարին,  
 Ծիտն է ծառին,  
 Հաւն է թառին.  
 Աշխատաւոր, վերկաց բանի,  
 Ծոյլ մարդու քունը տանի:  
 Երկնքի դռները բաց էր,  
 Ոսկէ աթոռը գրած էր,  
 Քրիստոսը վրէն նստած էր,  
 Լուսաւորիչը կանգնած էր,  
 Մեծ ու պատիկ գրում էին,  
 Արգարները խաղում էին,  
 Մեղաւորները լալիս էին:

### Ա Ր Ե Ի

Արեւ-արեւ, եկ, եկ,  
 Զիզի քարին վէր եկ.  
 Մեր ոչխարին մտիկ արա,  
 Որ գայլը գայ, իմաց արա:

Ջ Ի Ի Ն

Ջիւն է գալիս փաթիլի, փաթիլի,  
 Աղքատն ասաց՝ տունս է բաթիլի.  
 Պառաւն ասաց՝ մոզիս կորաւ,  
 Գայլն ասաց՝ փորիս զեց է:

ԳՈՂ ԱՂՈՒԷՍ

Աղուէսը պառկեց աղբի տակին,  
 վճռյ-վճռյ.

Աչքը գըցեց չաղ հաւի ձագին,  
 վճռյ-վճռյ.

Նետով կրտամ աչքի տակին,  
 վճռյ-վճռյ,

Որ մօտ չըգայ նա մեր բակին,  
 վճռյ-վճռյ:

ՋՈԿ-ՋՈԿ ԵՒ ՄԻԱՍԻՆ.

Վարդանիկն ու Սաթինիկը իրար հետ խաղում էին: Վարդանիկը իւր հօլն էր պտըտացնում. Սաթինիկը տիկնով էր խաղում: Վարդանիկը բարկացաւ Սաթինիկի վրայ. «Իմ հօլին մի մօտենար, ինձ հետ խաղ մի անիւր», — ասաց: — Դու էլ իմ տիկնին մի ձեռք տար, պտտասխանեց Սաթինիկը նեղացած:



Մանուկները յօնքերը կախեցին: Նրանք հեռացան իրարից և սկսեցին ջոկ-ջոկ խաղ անել: Բայց մենակ սկսած խաղն էլ երկար չըքաշեց և մեր մանուկները շուտով վերգցեցին իրանց խաղալիքները:

Մանուկներն իրանց խաղը ինչի չըշարունակեցին:

**Ամբողջ այբուբենը.**

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ,  
 լւ, ծ, կ, Տ, Ճ, Ղ, Ճ, մ, յ, ն, շ, ո,  
 չ, պ, ջ, ու, ս, վ, ա, ր, ց, ռ, փ, ք,  
 և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ, հ, ճ, ղ, ճ,  
 մ, յ, ն, շ, ո, ս, վ, ա, ր, ց, ռ, փ, ք, և,  
 օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ, հ,  
 ճ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, ս, վ, ա, ր, ց, ռ,  
 փ, ք, և, օ, ֆ:

**Գլխագրերը.**

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի,  
 Լ, ԼՎ, Ծ, Կ, Շ, Զ, Գ, Դ, Մ, Յ, Ն,  
 Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Յ,  
 Ի, Փ, Ք, Օ, Ֆ:

Ամբողջ այբուբենը  
 Ամբողջ այբուբենը  
 Ամբողջ այբուբենը

**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ**

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԻՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

**ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ**



**1. ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԽԱՂԱՍԻՔՆԵՐ**

Դաստական առարկաներ՝ գիրք, գրքիչ, քանոն,  
 մատիտ, տետրակ, զրրատախտակ, քարետախտակ,  
 քարեգրրիչ, թանաքաման, կա՛թճ...  
 Խաղալիքներ՝ գրնդակ, տիկին, հող, վեգ, չի-  
 լիկ, չիկափայտ...



Քարե գրքերը գրաստանն առաջնայ է: Գրքերսկը խաղաղ է: Մարտիւր. որեպրակը. որիկնը. Կանանը. լուսաբանանը. հաւը. յեկնը. գրքապատկարսկը. Կարեպատկարսկը:

Գիրք՝ մէջը քաղցը միրգ:— Ինչ որ գրքուեցաւ գրքիչով, չի հանուիլ բահով, բրքիչով:— Մատիւր մատիւր, կոշիկը ոտիդ, ճամբայ որ երթաս, միշտ լինին մօտիդ:— Հօլը կ'ուզէ խարազան, որ սլտոյտ գայ անխափան:— Վէգի կարմիրն է սիրուն, վանտակ է զարկոյներուն:— Չուան ցատքիւն օգտակար շարժմունք է մանկանց համար:

Առածներ. — Ով կրկարգայ, նա մարդ ա: — Ով կրկարգայ, նա կրկարայ: Ով որ աշխատի, նա կ'ուտի:

Հանելուկներ. 1. Իյուխըս կըտրեցին, սըրտիկըս հանեցին, գինի խըմացրին. յեզուս բացուեցաւ, խօսիլ սկսաւ:— 2. Քանի որ ձեծը կ'ուտէր, ուրախութեամբ կըպտըտէր, երբ որ ձեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:

ԱՔԱԳԱԳ.

Դու ինձ ասան՝ աքաղաղ,  
Ոսկէ կատարիդ մատաղ,  
Կարմիր միրուքիդ մատաղ,  
Ինչի՞ ես շուտ արթնանում,  
Բարձր բարձր երգ ասում,  
Քազը քունս խանգարում:



ԳՐԱՍՏԱՆԻՆ

Դաստան մէջ նրտած են աշակերտները: Աշակերտների առաջ նրտած է կամ կանգնած վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբոր վարժապետը ներս է մըտնում, աշակերտները սփի են կանգնում և աղօթում են: Ետոյ նըրանք նրտում դասով են պարապում: Աշակերտները դասատանը կարդում են, գըրում են, հաշուում են թուերով, երեմն էլ նըկարում են: Աշակերտների դիմացը դըրած է մի մեծ գըրատախտակ: Գըրատախտակի մօտ դըրած է կաւիճ և սպունգ: Գըրասեղանների վըրայ դըրած են դասական առարկաներ՝ գիրք, տետրակ, քարտախտակ: Քարտախտակի վըրայ գըրում են քարեգըրչով:

Ո՞վ է նրտած դաստան մէջ. Ո՞վ է կանգնած աշակերտների առաջ. — Ի՞նչ է անում վարժապետը. — Ի՞նչով են պարապում աշակերտները. — Ի՞նչ կայ դըրած աշակերտների դիմացը. Ի՞նչով են գըրում գըրատախտակի վըրայ. — Ի՞նչ կայ դըրած գըրասեղանների վըրայ. Ի՞նչով են գըրում քարտախտակի վըրայ:

ՄԻՆՆ ԴՈՒՆ

Մի շուն կար: Մի օր այժ շունը՝ մի կըտոր միս բերանին, պիտի անց կենար կամուրջով: Անց կենալիս ցամ նայեց ջըրին և տեսաւ, որ մի ուրիշ շուն գընում է ջըրի միջով բերանին բըռնած մի մեծ մսի կըտոր: Եան

ազահուծիւնը շարժուեցաւ. նա կրլանչեց ու  
ցած թրուաւ կամուրջից և կամեցաւ միւսի  
ձեռքից խրլել մտի կրտորը:

Բայց ի՞նչ. ցած թրուչելիս՝ իր բերանի  
կրտորը վեր գրցեց՝ ջուրը տարաւ. ջրրի մէջն  
էլ ոչ շուն գրտաւ, ոչ մրսի կրտոր. կենդանին  
խաբուել էր իր ստուերից: Ազահուծիւնը  
զրրկեց նրբան իր ունեցածից:

**2. ՈՒՏԵՆԻՔ ԵՒ ԽՄԵՆԻՔ.**

Ուտելիք՝ Հաց, արգանակ, սըպաս, փրլաւ, խո  
րոված, մածուն, իւզ, սեր, գաթայ, բաղարջ...

Խմելիք՝ ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր,  
կաթ...

Հացըն ապելիք է: Զուրը խմելիք է: Գրբելը: Գրբաւը.  
Գաթան. կաթը. մաթիպը. մաթանը. սուրճը. սերը. Կաթ-  
Գրբելը. հալը. Գրբաւհապը. Կրլաւը. Գինի. Խորովածը. Գա-  
թելուրը. արգանակը...

Առածներ.—Հացըն ուտելով, բանն անելով.—Աղ ու  
Հաց, սիրաբ բաց.—Հաց ու պանիր, կեր ու բանիր.—Կուշ-  
աբ սովածին մանր կրբրդի.—Մի բաժակ ջուր, ով ուզի  
աուր:

Հանելուկներ:—1. Ճերմակ տակաւիկ, մէջըն երկու կերպ  
ըմպելիք:—Օրան օրան շուռ է գալիս, ոտներ ջուրի, ման է  
գալիս, բերան ջուրի, կուլ է տալիս:

**Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ.**

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,

Բուրդըդ սպիտակ ու փափուկ:

Ինչո՞ւ վաղելով ու արօտ,

Մօրըդ քաշում ես կարօտ:

Մի՞շար, գառնուկ սիրական,

Փոքրիկ տրդի զու նման,

Կրգայ մայրդ, հետը շատ

Կրբերէ քեզ անուշ կաթ:

**Հ Ա Յ Ե Ւ Ջ Ո Ւ Բ.**

I.

Մարդուս գրլխաւոր ստելիքը հացըն է: Հացը պատ-  
րաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մաղում են, լե-  
տոյ տաք ջրով շաղախում, խրմոր են շինում. խրմորը  
շաղախելիս՝ հետը թրթ-խմոր են խառնում: Թրթ-խը-  
մորին ասում են խաշ: Եաղախած խրմորը լաւ հունցում  
են և ծածկում: Հունցած խրմորը քիչ քիչ քացախում  
է տաշտի մէջ—գալիս է: Տանտիկինը վերցրնում է եկած  
խրմորը, գընդում է և այդ գունդերից հաց է թրխում  
թոնրի կամ հընոցի մէջ: Հընոցին փուռ են ասում:

II.

Ջուրը մարդիկ չեն պատրաստում: Նա այնքան հար-  
կաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է  
հարուստին էլ, աղքատին էլ: Մարդիկ խրմելու ջուրը վեր  
են առնում աղբիւրներից ու գետերից: Ուր որ աղբիւր  
կամ գետ չըկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրը-  
հոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում: Ա-  
ռանց ջրրի մարդըս չի կարող ապրել. կենդանիներն  
էլ կրկոտորուին, եթէ ջուր չըլինի:

Ս. Ղ. Օ. Բ.

Մեր հայր, որ երկընթուճն ես, սուրբ լինի քո անունը, գայ քո թագաւորութիւնը, լինի քո կամքը երկ-րի վրայ էլ, ինչպէս երկընթուճն է. մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր մեզ, ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում ենք մեր պատապան-ներինը, մեզ փորձանքի մի տանիր, այլ ազատիր մեզ չարից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը եւ փառքը, այժմ եւ յաւիտեան:

**ԷՂԸ ԵՒ ՀՈՒՆԸ.**

Էջը բարեկամացաւ շանը և խրնդ-րեց, որ իր հետ ձանապարհորդելու գընայ: Շունը համաձայնեցաւ: Շատ գընացին թէ քիչ երկու ընկերները մի խոտաւէտ տեղ կանգնեցին, որ հանգըստանան: Երկուսն էլ յօգնած էին, երկուսն էլ սոված: Էջն սկսեց ախորժակով արածել կանաչ խոտը: Շունը ուտելու բան չունէր:

— Ընկեր ջան, խուրճինումըդ բաւական հաց կայ, ասեց նա էջին. տուր ինձ մի կըտոր հաց, սոված մեռնում եմ:

— Շոտ շատ կայ այստեղ, կեր դու էլ

ինձ պէս, ասաց էջը, քրմ-ծիծաղ տալով. հացը ես ուրիշների համար եմ պահում:

Շունը հոտոտեց խոտը, պոկեց մի բանի հատ, ծամեց ծամ՝ ծըմեց ու բերանից վէր ածեց:

— Ես խոտ չեմ կարող ուտել, էջ բարեկամ, ասաց շունը. այդ կերակ-րին ես սովոր չեմ. աղաչում եմ՝ մի պատառ հաց տուր, անօթի եմ:



Էջը այս անգամ ականջ էլ չըզրրեց շան աղաչանքին. նա ար ու ձախ հընձում էր անուշ խոտը և ուտում:

Ս, յդ միջոցին, որտեղից որ էր, հեռութիւնների տակից երևեցաւ գայլը, իշի թըշնամին. նա կատաղութեամբ դուրս վազեց անտառից, բայց երբ տեսաւ շանը, կանգնեց, դունչը երկարացրեց և տրխուր ձայնով օճնաց:

Էջը զարհուրեցաւ. « իմ սիրելի, իմ պատուական ընկեր, ասաց նա. աս՛ն քեզ բոլոր հացը, կեր, անուշ արն, միայն թէ ազատիր ինձ չար գազանի ատամներից »:

Շունք երեսը շուռ տուեց:— Ի ու արժանի  
չես, որ ես քո հացի պուրնկը կրարեմ, ա-  
սաց նա. քաղցածութիւնն ինձ չի սպա-  
նիլ, ես կրմբանեմ անտառը, կերակուր կը-  
զրանեմ, դու էլ, եթէ կարող ես, քո գրկսիդ  
ճարը սես:

Ասաց ու հեռացաւ շունք: Մի ակըն-  
թարթի մէջ գայր պատանոտեց էշին:  
Անհարազատ ընկերը սաստիկ պատժուեցաւ  
իր վարմունքի համար:



3. ՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԱԿԵՐ, ԿԱՌՔԵՐ.  
Շինութիւններ եկեղեցի, ուսումնարան,  
տուն, գոմ, կալ, ջրբազայ . . .

Նաւեր՝ մակոյկ, նաւակ, շողենաւ, առագաս-  
տանաւ:  
Կառքեր՝ սայլ, սայլակ, սահնակ, կառք, շո-  
գեկառք, հանրակառք:

Տանք շին-ութիւն է: Սակայն նա է: Տէրակը Գու-  
սական արարչայ է: Փըլաւը. աստակը. Գրքահարը. Եկեղե-  
ցին. շոգենաւը. աստակը. Բէյը. Խորվաճը. աստակար-  
անը. Գոմը. Ջրբազայը. սայլը. Գրքահարակը. հանրակառ-  
քը. աստակարակը . . .

Առած:— Մինչև սայլը շուռ չի անցնիլ ճամբէն չի զրըս-  
տուիլ:

Հանելուկներ:— 1. Անշուր զաղաց, անկրակ բաղարջ: 2. Չորս  
եղբայր կան, միմիանց լեռնից վազում են, բայց իրար չեն  
հասնում:

Տ Ո Ւ Ն .

Մեր տուներ մեծ չէ. նա երեք սենեակ ունի և մի  
խոհանոց: Ասենակներից մէկում ես ու եղբայրըս սովո-  
րում ենք մեր դասերը: Երկրորդ սենեակում մենք ճա-  
շում ենք: Նրբա մէջ դարսած են շատ աթոռներ, մի  
մեծ սեղան և մի սահարան: Ամենից մեծ սենեակում  
մենք քննում ենք. դա կոչվում է նընջարան:

Մեր տան բակը շատ մեծ է: Բակի աջ կողմը մի փոքրիկ պարտեզ կայ, իսկ ձախ կողմը շինած է գոմը: Բագումըն է լինում մեր տան հաւատարիմ սպասուկաներ— շուներ:

Ի՞նչպիսի տուն ունիք դուք.  
Քա՞նի սենեակ ունի ձեր տունը.  
Ո՞ր սենեակի մէջ ինչ էք անում.  
Ի՞նչ կայ շարուած սենեակների մէջ.  
Ի՞նչպիսի բազ ունի ձեր տունը.  
Ի՞նչ կայ շինած բազի այս ու այն կողմը.  
Ո՞վ է պահպանում տունը.



Փ Ի Ս Օ.


Կատուն եկաւ՝ փիսիկ-փիսիկ,  
Հազար նազով, ինչպէս հարսիկ.  
Դունչը սրրեց թաթիկներով,  
Մազը սանրեց չանչիկներով:

Կատու—կատու, է՞ր ես տըրտում.  
Թէ՞ մըկներն են այսօր արթուն:

### ԿԱՏՈՒ

Մի չար կատու կար. նա խեղդում էր ձեռքն ընկած մուկը և սաստիկ նեղքն էր գըրցում նրանց: Մըկներն էլ յիմար չէին. նըրանք շուտով ձանաչեցին իրանց թշնամուն և աշխատում էին թագչիլ նրրանից. երբ որ կատուն տանն էր՝ բընից դուրս չէին գալիս: Բայց փիսոն խորամանկ էլ էր. նա գընաց ամբարը, ալրի մէջ թաթախուեցաւ և այդպէս սպիտակած՝ մըտաւ հացի տաշտը և մի անկիւնում կուծ եկաւ: Երկար ժամանակ կատուի ձայնը չէր լրսվում: Մըկները կարծեցին թէ նա սատկել է, դուրս եկան ծակերից և սկսեցին ուտելու բան որոնել: Մէկ մուկը մօտեցաւ հացի տաշտին, նայեց տեսաւ մի սպիտակ բան: «Լա՛ւ է, ասեց նա, այստեղ համ հաց կայ, համ պանիր»: Ասեց ու մօտ վազեց պանրին: Պանիրն էլ մեր ալրակողոր կատուն էր. թաթը մեկնեց և տեղըն ու տեղը խեղդեց մըկանը: Յետոյ եկաւ երկ-րորդը, եր-րորդը, չոր-րորդը. իսկ մեր փիսոն ամենքին էլ

խեղդոտեց: Վերջապէս մօտ եկաւ մի ծեր  
ու փորձուած մուկը, կանգնեց տաշտի շր-  
թունքին և զգոյշ նայեց սպիտակ բանին.  
յետոյ ճանաչեց նրբան ու ասեց. «էյ բա-  
րեկամ, բո սպիտականայր մի գրօշ չաժէ  
աչքումբս. ճանաչեցի, մլաւան կատուն ես,  
գոյնըդ-ես փոխել, հողիդ միւնայն է: Սնեց  
ու փախաւ, ընկերներին իմացրեց:



#### 4. ԳՈՐԾԻՔ ԵՒ ՍԱՐՔ.

Գործիք դանակ, գրդալ, սլատառաբաղ, ասեղ,  
մրկրատ, կացին, մուրճ, սրղոց, արօր, գերանդի, մանգաղ,  
թի, բաճ, թուր, դուր, ուրագ...

Սարք՝ սանձ թամբ, փորքաջ, ասպանդակ, կապ,  
կրթակալ, թիկնափոկ:

Ղանակը գործի է: Սանջը սար է: Սայլը կատ է:  
Արօրը. կախը. լաճիքը. մանգաղը. սպասը. փարտալը. բահը.  
արագը. կրթակալը. մրկրատը. էլեղեցին. սլատառաբաղը.  
գերանդը. սրղոցը. հուրը...

Առածներ:—Բոյն գրկին բոռնց քով տալ չի լինիլ:—Ու-  
րագըն իր կոթը չի տաշել:

Հանելուկներ:—1. Տասանը փայտ է, մեռելըն երկաթ է,  
երբոր ձայն կրտայ, աշխարհ կրբնդայ:—Փրքած փայտը փո-  
րեցին, առիւծը մեջը քաղեցին:

#### Բ Ա Կ Ի Կ.

ճագիկ—բագիկ,  
կարմիր թաթիկ:

Ուր ես գրնում կամաց կամաց,  
Ձագուկներըդ չորս կողմըդ առած »:  
—Ես գնում եմ ջուր գրտնելու:  
Ձագուկներըս լուանայու.  
Ձագուկներըս մաքուր մաքուր.  
Տրղոց երեսն աղտ է ու մուր:

ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ.

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրըս ու մայրըս ինձ շատ են սիրում: Ես երկու քույր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքըս նրանց էլ են շատ սիրում: Հայրըս ու մայրըս մեզ կերակրում են. նրանք մեզ ուտելիք ու հագնելիք են տալիս. նրանք մեզ պահում, պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց համար աղօթք ենք անում:

ԱՌՍԻՈՏԵԱՆ ԱՂՕԹՔ.

«Փառք ստեղծողիս, որ քուն անուշիկ  
Տուաւ իմ աչքիս, արթնացրեց հիմիկ:

Ծագեց իմ վրայ սիրունիկ արեւ,

Մայրիկըս տուաւ ինձ քաղ-ցրիկ բարեւ,

Հայրըս համբուրեց, առաւ ինձ գիրկը,

Ինչպէս որ հովիւ—փոքրիկ գառնիկը:

«Աստուած իմ եւ Տէր, մինչեւ այս կէտիս,

Իո՛ւ ես պատրաստել իմ ամեն բարիս.

Տուր որ անմեղիկ մնամ մըշտական,

Շատին սիրելի, բեզ հաճոյական»:

ՍԱԳՆ ՈՒ ԲԱԴԸ.

Սազն ու բաղը գլնացին լըճի ափը, որ համ մի փոքր լողանան, համ էլ ուտելու բան գրանեն: Լողացան, մաքրուեցան, յե-

տոյ յետ դարձան և սկսեցին իրար հետ զրրոյց անել:

— Բաղիկ, կրցեց սաղը, տենում ես, ի՞նչ շնորհալի թրուշուն եմ ես. ջրումը լողում եմ, օդումը թրուշում, գետնի վրայ էլ ման եմ դալիս. ասա խընդրեմ, ինձ նման էլ կենդանի կայ աշխարհումըս. ես բոլոր թրուշունների թագաւորը չեմ:

«Ես էլ հէնց դրրա վրայ էի մտածում, ընկերրս, պատասխանեց բաղը. կասկած չըկայ որ դու շատ շնորհալի թուշուն ես. բայց ես էլ քեզանից պակաս չեմ. տես թէ ի՞նչ պէս եմ սուրուր տալիս ջրի երեսին, խողում փրփրոն ալիքների հետ, ի՞նչպէս եմ մրանում ջրի տակը, մանրիկ ձրկներ ու ձիճուներ բրունում, նորից դուրս գալիս, ուռչում, փրքվում թագուհու պէս: Հա՛, հա՛, ընկերրս, մենք շատ զարմանալի թրուշուն ենք. մեզ նրման շնորհքով կենդանի չըկայ աշխարհումըս:

Լճի ափին՝ ծառի վրայ վէր էր եկել ազուար և ականջ էր դրնում դրրանց: Երբ որ բաղը խօսքը վերջացրեց, ազուար կան-

չեց. «Այ միամիտ թրուռներ, ինչի էք  
հարտանում: Կարող ես դու, սագիկ,  
շան պէս արագ վազել:

— Այ, պատասխանեց սագը:

«Իսկ դու, բաղիկ, ծիծեռնակի պէս  
թրուչիլ կարող ես:

— Չեմ կարող, ասեց բաղը:

«Իսկ որը ձեզնից կարող է լող տալ ձր-  
կան պէս:

Սագըն ու բաղը գրլուխները կախ գը-  
ցեցին:

— Ուրեմն էլ ինչի էք հրպարտանում: Ես  
կարծում եմ, ընկերներ, որ աւելի լաւ է,  
երբ մարդըս մի բան գիտէ ու հիմնաւոր,  
բան թէ շատ բան ու բոլորըն էլ թերի:



Կարան յացաց ցամ: քիւսի մմ նստից ցնկաւ  
սոյլառ ցմէ 5. ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԱՍԱՆՆԵՐ.  
Նստի ցնմնյաւար ծագանամ: Ժ նստցունայ ցոյրամ  
ցի Կարասիք: սեղան, ակթոռ, բաղկաթոռ, գահա-  
ւորակ, բաղմոց, մահճակալ, օրօրոց, պահարան, գրղ-  
րոց, նրստարան:

Ամաններ՝ գաւաթ, ափսէ, բաժակ, կուժ, կու-  
լայ, հեշտայեռ, կաթսայ, թաւայ, շիշ, սրուակ,  
պնակ:

Առածներ:—Ա՛յ կուժ, քեզ ասեմ, այ կուլայ, դու ի-  
մացիր:—Մի բաժակ ջուր ով ուզե տուր:—Կուժը ջրի ճանա-  
պարհին կըկտորուի: Աւելորդ կահ-կարասի պատճառ է շատ  
փասի:

- Հանելուկներ:—1, Չորս եղբայր մեկ գղակի տակ:  
2, Վերեից երդիկ, ներքեից դոռնակ, մեզ  
տեղումը ջուր ու կրակ:

Սեղանը քառակուսի ատարկայ է: Գաւաթն աման է:  
Ափսէն. Բաղկաթոռ. Գահաւորակ. արասիք. Բաժակ. Կ-  
րոց. կախան. Կուժ. Կուլայ. օրօրոցը շիշը, Բղմոցը, ար-  
գանակը. Բնարակը. Բնան. Կարասիք. Գնեին. Գեարակը.  
Գրղահարը. Գրանակը. Զափեմար. Զափեկար. Կեշտայեռ.  
Սեյր. Գախան. Կանիքը. Բաղմոցը:

ԱԹՈՌ ԵՒ ԳԱԻԱԹ.

Աթոռը շինում են փայտից: Աթոռն ունի չորս  
տուր, նրստելատեղ և թիկունք: Նրստելատեղը հիւսած  
է ծղօտից. նա տախտակից կամ փափուկ կտորից էլ  
է լինում: Աթոռ շինողին ատաղձագործ են ասում:



Գաւաթը շինում են կաւից: Կաւը բարակ մաղում են, շաղախում, հունցում և ուզած ձևը տալիս: Շաղախը ցամաքում է: Ցամաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և սաստիկ կրակ են վառում տակը: Ցաքութիւնից կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրուտ են ասում:

Ա Ր Ե Ի.

«Արեւ—արեւ, գուրս արի,

Քեզ բերել ենք աչքի լոյս:

Քո քուրիկը՝ լուսինկան—

Բերաւ չամիչ մէկ աման.

Ամպը եկաւ—մոլթ արաւ,

Չամիչն աչքերէս կորաւ:

Բայց երեսդ, արեգակ,

Մէկ բուռ չամիչ քեզ կրտանք:

—Օ՛խ, արեւին խաբեցինք»,





Ամպի տակից հանեցինք:

ՀԱՅՔ ԵՒ ՎԱՌԻԿՆԵՐԸ:

Հաւը վառիկներն առաւ ու գնաց քրջուջ անելու: Քջուջ անելիս՝ մայրը նկատեց, որ ուրուրը պարտում է երկնքում և նայում է վառիկներին: Մայրը ձայն տուեց, վառիկները հասկացան՝ որ վտանգ կայ, վա-

զեցին մտան մօր թւերի տակ: Յինը երկար պտրտեց և էլ վառիկ չըտեսնելով՝ հեռացաւ գնաց: Հաւը բաց արեց թւերը, վառիկները նորից սկսեցին վազվրզել, խաղալ: Անցկացաւ մի քանի րոպէ, սրառես ուրուրը հեռուից նկատեց ձագերը և դէպի նրանց թռաւ: Հաւն էլ քնած չէր, նա բարձր ձայնով կանչեց իր ձագերին: Վազեցին ձագերից շատերը, մտան իրանց մօր թւի տակը, բայց մի երկու վառիկ ականջ չարին իրանց մօր ձայնին. նրանք կարծեցին, թէ ուրուրը իրանց փսաս չի տալ, այլ առաջուայ պէս կ'անցի—կ'երթայ. բայց սրխալուեցան: Յինը նետի պէս ցած իջաւ և նրանցից մինին ու միւսին ճանկերի մէջ առաւ տարաւ: Ազատուեցան միայն նրանք, որոնք մօր խօսքը լսել և նրա թւերի տակըն էին մտել:








Թանձրը մառախուղը	Կերաւ-լափեց,
Պատեց գետինքը,	Փորին դեղ արաւ:
Վայ-վայ, վոյ-վոյ	Պառաւը կանգնած էր
Պատեց գետինքը.	Փռնը խոտը ձեռին,
Պառաւը խիստ տըխրեց.	Անմըխիթար ձայնով
Գայլն ուրախացաւ:	Կանչում էր այծին՝
Այծի սնուշ մըսով	«Ե՛կ—եկ, ե՛կ—եկ»,
Փորին դեղ արաւ,	Կանչում էր այծին:

Օ Չ Ը.

Զմեռն էր: Իհւղացին անտառ գնաց,  
 փայտ կըտրելու: Փայտ կըտրելիս՝ նա տե-  
 սաւ մի օձ, որ ցրրտից սառել, փէտացել էր:  
 Բարի գիւղացին խրղճաց օձին, վերցրեց,  
 դրեց կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տա-  
 քացաւ թէ չէ՝ վրայ վազեց, որ կծէ գիւ-  
 ղացուն:

«Ո՛վ ասկերախտ, ասեց մարդը. իմ լա-  
 տութիւնը դրանով ես վճարում»: Այս ա-  
 սեց ու կացնի քիւլփով խփեց, գլուխը  
 ջախջախեց:



Ն Ա Պ Ա Ս Ս Ա Կ

Մի վաղիր այդչափ արագ,  
 Իմ շիրունիկ նապաստակ,  
 Շատ պըստիկ ես տակաւին,  
 Թաթիկներդ կըյոգնին:  
 Քեզ կրբերեմ՝ կաթն ու հաց  
 Շաքրաջրով համեմած,  
 Ուտես, խըմես, զօրանաս,  
 Մօրըդ կարօտ չըմընաս:  
 Ծանրը-ծանրը կըքայլես,  
 Սիրտըս վեր-վեր կըհանես.  
 Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,  
 Կ'երթաս, ազատ կ'արածես:

7. ԲՈՅՍԵՐ.

- ա. Ծ ա ո եր՝ հացի, կաղնի, լորենի, խընձորենի,  
 տանձենի, ընկուղենի, թղենի, թթենի...
- բ. Թ փ եր՝ մօրենի, վարդենի, մշի, մասրի...
- գ. Բ ա ն ջ ար ե լ է ն՝ սիօեռ, լօբի, սոխ, բողկ...



դ. Հացաբոյսեր՝ ցորեն, գարի, վարսակ, կորեկ, հաճար, բրինձ...

է. Խոտեր՝ անանուխ՝ ռեհան, եղինջ, թըրթընջուկ, աւելուկ.

զ. Ծաղիկներ՝ մանուշակ, շուշան, յասմիկ, նարգէս, շահոբրամ, քըրքուժ...

է. Սուկեր՝ կարմրասուկոն, ոչխարասուկոն, գայլասուկոն, անտառասուկոն:



Առածներ:—Ծառն արմատից կըչորանայ:—Պրտզատու ծառը գլուխը կախ կըզահի:—Մի ծաղկով գարունը չի լինիլ: Բարի ծառը բարի պտուղ կըբերի. չար ծառը չար պտուղ կըտայ: Ամեն ծառ իր պրտզիցը կըճանաչուի:

Հանելուկներ:—1. Է նա կանաչ կոճակ կոյոր, մաքուր հիւրով ցուած տրկճոր, կարմիր մեղուք ներսը բոյոր, եղբայր, դու կեր իբր մեղրի ծոր:

2. Բռնեմ ափովըս, շաղ տամ քաթովըս, մեռնի տարով, ապրի բարով:

3. Ոսկե կճուճիկ, միջուկն անուշիկ:

4. Գարնանը դաշտումը տեսայ մի ծաղիկ, կանաչ տերեւ ուներ եւ կապոյտ աչիկ. խոտերի մեջ հագիւ նա անանըվում էր. քեւ համեստ ծաղկած՝ սիրուն նոտ ուներ:

Խնչարենին ծառ է, իսկ վարդենին լուս է: Անանուխը խոտ է, իսկ տեւուրը . ցորենը . կարասիկը . կաղնին . ճարենին . լաբին . գարին . ընկաղենին . ճակընդեղը . սաճիկը . Բրինձը . կաղամբը . կեւասը . կարելը . վարսանգը . կարմրասուկոնը . սիսուր . ճանաչուի . ճասրին . շահոբրամը . տեւուրը . վարսան . լարլարնը . քըրքուժը . հաճարը . Բողնը . տեւուրը . շուշանը . . .

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՃԱԳԱՐ.

Աղուէսը վայրենի կենդանի է. նա միս է ուտում: Ճագարն էլ վայրենի կենդանի է, բայց խոտ է ուտում: Աղուէսը գետնի տակը խոր ծակում է, իրան համար որջ է շինում. ճագարն էլ է իրան համար որջ շինում, բայց որջը փոքր է լինում ու նեղ, էնդուր որ ինքն էլ փոքր է: Աղուէսը ճագարին թշնամի է:

Մի անգամ աղուէսը մօտենում է ճագարի որջին և ասում է. «Ճագար, ինչի՞ ես խոր փոսի մէջ պահուել. դուրս արի այդ մութը ծակից, արածի՛ր պայծառ արևի տակ»:

— Ենորհակալ եմ, ասում է ճագարը. երբոր այդտեղից կըհեռանաս, խրատըդ կըլսեմ ու դուրս կըգամ: Բայց քանի որ այդտեղ ես, հանգիստ կընրստեմ բունիս մէջ: Քեզպէսների բարեկամութիւնից ես միշտ փախչում եմ:

ՄԱՆՈՒՇԱԿ.

Կապոյտ գըլխով, կանաչ ոտով

ես ծաղիկ եմ անուշ հոտով.

Թէեւ տունկըս փոքրիկ է՝ ցած,

Արօտներում միշտ թագկացած,

Բայց իմ փունջըս ամենի տան,

Թէ աղքատի, թէ մեծատան,

Իբրեւ գարնան առաջի զարդ,

Կարէ տեսնել ամեն մի մարդ:

Ես եմ սիրուն գարնան գուշակ.

Իմ անունըս է մանուշակ:

ՅՈՐԵՆ ԵՒ ԳԱՐԻ

Գիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում նա ցորեն ցանեց, միւսում՝ գարի: Արտերն աճեցին, բարձրացան, հասկեր գցեցին: Մի օր գարին սկսեց խօսիլ. «Յորեն եղբայր, ասեց նա, վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է,— ոչ ոսկի ունի, ոչ արծաթ. ո՛վ պէտք է մեր յարգը ճանաչէ, մեզ գին տայ: Արի, ցորեն եղբայր, թողենք հեռանանք այս գիւղից. արի՛ գնանք այնտեղ, ուր ոսկի շատ կայ:

Յորենը լսեց դրացու խօսքերը և ասեց. «Շատ ափսոսում եմ, գարի եղբայր, որ միայն քիստըդ ես երկարացրել, իսկ խելքըդ կարճ է մնացել. ինչի՞ մենք ման գանք ոսկու յետևից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին ինքը մեր դուռը կըգայ:

Ա Ն Ձ Ր Ե Ի.

Ա՛նձրեւ-անձրեւ, ցած արի,

Բըսցա՛ւր ցորեն ու գարի.

Բըսցո՛ւր ծաղիկ, կանաչ խոտ,  
 Աւլէ փոշի՛ մաքրէ՛ օդ:  
 Ա՛նձրեւ-անձրեւ, ցած օրի,  
 Գալըդ ամենուս բարի:

### 8. ՀԱՆՔԵՐ.

Քանկագին մեծաւներ՝ ոսկի, պլատին, արծաթ:

Հասարակ մեծաւներ՝ երկաթ, պլդինձ, արծիճ, կլայեկ. . .

Քանկագին քարեր՝ անդամանդ, զըմրուխտ, յակինթ . . .

Հասարակ քարեր՝ որձաքար, չէչաքար, աւազաքար . . .

Հողեր՝ սեւահող, աւազահող, կաւ, կիր, գաջ. . .

Առածներ:—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:—Ոսկին փոքր է, բայց գինը մեծ է:

Հանելուկներ:—1. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մեկ մօրից ծնուած. մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը՝ յարգի եւ բանկագին:

Ի՞նչ է անստ լարժապետը.—աշկեբոյր. Բահման. հապագոյթը. լանուանանը. հովիւր. սրսարը. յընսար. Բըրուար. Բարսաղը. կօշկուարը. յին. կովը. հոսան. մըլան. շանը:

Ի՞նչ բան է ասին.—երկաթը. սրձաքարը. անդամանդը. հաւը. պլատինը. արծիճը. զըմրուխտը. չէչաքարը. կիրը. արծաթը. պլդինձը. գաջը:

ՈՍԿԻ ԵՒ ԵՐԿԱԹ.

Ոսկին և երկաթը վիճում էին միմեանց հետ:

«Ես ամենից լաւ մեծաւն եմ, ասում էր ոսկին. ա-մենքը գովում են ինձ, պատիւ են տալիս. ամենքը սիրում են ինձ: Մարդ-կանց համար ես փող էլ եմ, զարգարանք էլ. ինձնից ինչ ասես շինում են՝ սիրուն շրջթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոցներ. . . է՛հ, էլ ինչ երկարացնեմ. առանց ինձ մարդու կեանքը կեանք չէ, այլ տանջանք է: Եթէ ես ուզենամ ամբողջ աշխարհը մենակ կըզնեմ»:

Երկաթն ասեց. «Շատ ես պարծենում, ոսկի՛ աղայ. իրաւունք էլ ունիս. մարգիկ քեզ շատ են երես տալիս: Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդըս ուզում է ապահով ապրիլ, նրան երկաթ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կըտրում փայտը, հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Եթէ դու, աղայ ջան, կարող ես աշխարհ գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցըդ խլել»:

ԳԱՌՆ ՈՒ ՄԱՅՐԸ.

Ի՞նչ ես լալիս, գա՛ւնիկըս,  
 Խիստ ծեծ կերայ, մայրիկըս.

Քեզ ո՛վ ծեծեց, արեւիկ:

«Մէկ չար պառաւ, իմ մայրիկ»:

— Ինչի՞ ծեծեց քեզ, գա՛ւնիկ:

«Մառի տակն էի, մայրիկ»:

— Ինչո՞վ ծեծեց, նազանի:

« Հաստ ճիպտով, իմ նանի »:

— Որտեղիդ զարկեց, անուշիկ:

« Ոտիկներս քընքուշիկ »:

— Ինչպէ՞ս լացիր, անմեղիկ:

« Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ »:

**ՈՋՆԻ.**

Աստուած ամեն կենդանու միջոց է տուել իր անձը պաշտպանելու, զազանները ժանիքներով են պաշտպանվում, ընտանի կենդանիները զօրեղ եղջիւրներով, իսկ փոքրիկ ոզնին այն ասեղնաձև փշերով, որոնք ծածկում են նրա մարմինը:

Սոված գայլը մի օր թափառում էր դաշտումը և ուտելու բան էր որոնում. քանի օր էր նա ոչինչ չէր կերել. խեղճի փորը վեց-վեց էր անում: Այդ միջոցին նա տեսաւ մի փոքրիկ կենդանի, որ կամաց-կամաց առաջ էր գալիս: Սա փշոտ ոզնին էր: Գայլը մօտ վազեց նրան: Ոզնին ոտնուձեռը հաւարեց, կրճկուեցաւ, փրշերը ցից արեց: Գայլը դրժուարի բռնուեցաւ, նա մտածեց խորամանկութեամբ

բանը գլուխ բերել: « Սիրուն ոզնի, ասեց նա, այդ ի՞նչ զեղեցիկ կենդանի ես, ի՞նչ սիրունիկ ոտիկներ, ի՞նչ նազանի դունչ ունիս, ախո՞ս միայն, որ զդեստորդ փշոտ է. ի՞նչ կրլիների, ընկերիկ, քընքուշ փորըդ գոնէ չքծածկես այդ անախտան փշերով »:

Ոզնին քթի ծայրը դուրս հանեց և ասեց. « Հանգիստ թող ինձ, գայլ, գովասանքիդ կարօտ չեմ: Ենորհակալ եմ Աստուծուց, որ մարմինս ծածկել է փշերով: Եթէ այս փշերը չըլինէին, դու ուրիշ լեզուով կըխօսէիր հետս »:

**Գ. ՍԱՐԳ.**

Սարմնի անդամները՝ գլուխ, պարանոց, բուն, ձեռներ, ստներ:

Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք, ճակատ, դէմք:

Գէմքի մասերը՝ յօնքեր, աչեր, քիթ, թշեր, քերան, կզակ:





Ա ռ ա ծ ն ե ր : — Ա ս տ ու լ ա ծ ձ ե ո թ է տ ու ե լ բ ա ն շ ի ն ն լ ու հ ա —  
մ ար : — Հ ա ց ն ու տ ե լ ո Վ , բ ա ն ն ան ե լ ո Վ : — Բ ա ն ի ան ու ն ը տ ա —  
լ ի ս՝ գ լ լ ի ց ա ը բ ա ն ու մ է : — Ծ ո յ լ մ ար զ ու ձ ե ո ն ն ր ը մ ի շ տ փ ը —  
լ աւ ե ն ու տ ու մ : — Մ ի ձ ե ո ը ծ ա փ չ ի տ ա լ : — Մ ար մ ն ու ճ ը ա գ ն  
ա չ բ ն է :

Հ ա ն է յ ու կ ն ե ր : 1. Մ ե կ ը կ ա ն գ ն ա ծ խ օ ս ու մ է , երկ ու ս ն  
ա կ ա ն զ ե ն դ ն ու մ , ի ս կ երկ ու ս ը ն ա յ ու մ ե ն :

2. Երկ ու ս ե ն ն ա կ մ ի ս ի ս ն ա ն ի :

Շ ու տ ա ս է յ ու կ : Փ ո կ ա կ ա յ Յ ա կ ո թ ա պ եր , ք է կ ա ը ա ս  
մ ի փ ո կ կ ա պ ես , ե ս ք ե գ կ ա ս ե մ , շ ն ո ը ր ր ը ղ շ ա տ , փ ո կ ա կ ա յ  
Յ ա կ ո թ ա պ եր :

Գ յ ձ Բ շ լ ո խ ը մ ար մ ն ի մ ա ն է . գ ե ձ չ ը . ա չ չ ը . ծ ո ճ ր ա ի ը . Բ եր ա ն ը .  
Ք ա ղ փ ա լ ը . չ ե ո ն ն ր ը . կ ղ ա ի ը . ու ն ն ր ը . ճ ա ի ա ղ ը . յ ծ ն չ եր ը . չ ու ն չ ը .  
Լ շ եր ը . պ ար մ ն ա ղ ը . չ ի լ ը . ա չ եր ը :

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն Ա Ղ Օ Թ Ք .

Տ է ր Ա ս տ ու լ ա ծ ի մ , Տ է ր բ ար եր ար ,

Դ ու պ ա չ ա ղ ա ն է ի ն ձ ա յ ս գ ի շ եր ,

Տ ու ը հ օ թ ը ս ե ս մ օ թ ը ս կ ե ա ն ը եր կ ար ,

Հ ա ն գ ը ս տ ու թ ի լ ն ու լ աւ օ թ եր :

Ք ո ս ու ը ր հ ը ե շ տ ա կ ը զ մ եր մ օ տ ի ց

Զ ը հ ե ու ա ն ա յ ա մ ե ն ե լ ի ն ,

Ա յ լ պ ա չ է մ ի շ տ փ ո թ ձ ա ն ը ն ն ր ի ց :

Ա ը թ ը ն ա ց ն է զ ու ար թ ա գ ի ն :

### Մ Ե Ղ Ո Ւ Ն Ռ Ի Ճ Ա Ն Ճ Ը .

Ճ ա ն ձ եր ը զ ո ճ չ է ի ն իր ա ն ց կ ա ց ա ծ տ ե —  
ղ ի ց . ն ը ա ն ը խ ո թ չ ու ը զ ար ի ն , ո թ ու ը ի շ եր —  
կ եր գ ն ա ն : Բ ա յ ց մ ե ն ա կ չ է ի ն ու զ ու մ զ ը —  
ն ալ . իր ա ն ց ի ց մ է կ ի ն ու ղ ար կ ե ց ի ն մ ե ղ ու լ ի  
մ օ ա , ո թ ն ա է լ գ ա յ :

« Մ ե ղ ու ե ղ ը ա յ ը , ա ս ե ց ձ ա ն ձ ը , չ ար  
մ ար ղ ի կ ը ղ ա ղ ար չ ե ն ս ա լ ի ս մ ե ղ ա յ ս տ ե ղ .  
հ եր ի ը չ է , ո թ ա մ ե ն բ ա ն ծ ա ծ կ ու մ ե ն մ ե —  
զ ա ն ի ց , լ ու ս ա մ ու ն ն եր ու մ է լ թ ո յ ն ե ն զ ը —  
ն ու մ , ո թ ու տ ե ն ը ու մ ե ո ն ի ն ը : Խ ը ը ձ ի թ ն է —  
ր ու մ մ ե ղ չ ե ն ն ե ղ ա ց ն ու մ մ ար ղ ի կ , բ ա յ ց  
ա յ ն տ ե ղ է լ ու ը ի շ թ ը շ ն ա մ ի ու ն ի ն ը . ս ար ղ ե —  
ր ը ձ գ ու մ ե ն իր ա ն ց ո ս տ ա յ ն ն եր ը , մ եր ո ս —

ները մճրճում են, մեզ խեղդում, մեր արիւնը ծծում: Արի, մեղու եղբայր, գնանք հեռանանք այստեղից»:

Մեղուն լսեց ու պատասխանեց. «Դուք գնացէք, ուր որ կամենում էք. ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լավ է. ամենքը պատուում են ինձ ու սիրում. ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղքը թէ չար և թէ բարի մարդի, թէ հարուստի և թէ աղքատի ճաշակը քաղցրացրնում է. իմ տուած մոմը Աստուծու տաճարն է լուսաւորում: Դուք գնացէք, ուր որ կամենում էք. միայն զիտենաք, որ ամեն տեղ էլ ձեզ կըհալածեն, որովհետև ոչ ոքի օգուտ չէք տալիս՝ բացի օգուտ չըտալը, ձանձրացնում էլ էք»:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԸ.

Մեղու.

Գարուն, ամառ ամեն օր  
ես գնում եմ դաշտ ու ձոր.

Աշխատում եմ ես անկերջ,  
Մեղրը պրտրում ծաղիկանց մէջ.  
Եւ գրտածըս ես շիտակ  
Իսկոյն տանում եմ փեթակ.  
Որ երբ փրչէ ցուրտ քամին,  
Ծաղիկները թառամին,  
Ես ձըմեռը պաշարով  
Կինիմ իսպառ ապահով:

Ճանձ.

Փռքրիկ ձանձ եմ զուարճասէր,  
Միշտ թըռչում եմ վայր ու վեր.  
Մի հով տան մէջ, մի բակում,  
Սաստիկ արեւի տաքում.  
Կերուխումից խաղից ջոկ  
Իսկի չունիմ ուրիշ հոգ,  
Եւ ներկայով բաւական,  
Միտք չեմ բերում ապագան:

10. ՁԵՆՆԵՐԻ, ՈՏՆԵՐԻ ԵՒ ԲՆԻ ՄԱՍԵՐԸ.

Ձեռների մասերը՝ դաստակ, արմունկ, ուս:  
Ոտների մասերը՝ ազդրը, սրունք, գարշապար:

Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

Իսպառ չեմ ճանձ է. աչքը. կուրծք. բունք. սրունք. լիկունք. չեւք. գարշապար. փրք...

Քիրքը Գասախան տասրէայ է. ընդը. Գնդաչը. սեղանը. հա-  
շինը. խորովածը. հովը. նապաստաչը. հապուն. Ուրբէնը—չը. վար-  
դէնին. խնչարէնին. օջը. Գորդը. Տոծաչը. Էրհաւը. Ծասար. Կարը...

**ԵՐԿՈՒ ՀՈՎԻՒ.**

Պետրոսն ու Կարապետը դաշտից տուն էին գա-  
լիս: «Գիտես, Պետրոս, ասաց Կարապետը. եթէ քո ոչ-  
խարներից մէկն ինձ տաս, իմ հօտը քոնիցը երեք  
անգամ շատ կըլինի:

—Ոչ, պատասխանեց Պետրոսը. աւելի լաւ է դու  
քո ոչխարներից մէկն ինձ տուր՝ այն ժամանակ մենք  
հաւասար կ'ունենանք:

**ԾԱՌՆ ՈՒ ԹՈՒՓԸ.**

Անտառի կողքին՝ փոքրիկ բլուրի վրայ,  
բարձրացել էր մի հրակայ կաղնի: Նրանից  
քիչ հեռու՝ շատ մասրի թփեր էին դուրս  
եկել: Մի օր կաղնի ծառը գլուխը շար-  
ժեց և ասեց այդ թփերին. «Ի՞նչքան ան-  
պէտք էք և թոյլ, այ ողորմելիներ. ամեն  
մի մանուկ կարող է ձեզ կտրել—կըտրա-  
տել, թեթեւ քամին էլ ճկում—զեանից է  
կըպցընում ձեզ. իսկ ես, նայեցէք որքան մեծ  
եմ և յաղթանդամ. ես բանի տեղ չեմ դնում

գիւղացի մանուկներին. չեմ էլ վախենում  
քամուց ու փոթորկից. ես բոլոր ծառերի  
թագաւորն եմ »:

Այս օր ասեց՝ մէկ էլ տեսնես, սաստիկ  
փոթորիկ բարձրացաւ. անտառը տարու-  
քերուեցաւ քամու առաջ. մասրի թփերը  
կըռացան, զեանիցը կպան: Հաստարմատ  
կաղնի ծառն էլ սկըսեց քամու առաջ օրօ-  
րուիլ. նրա արմատները ճրոճըռացին, ար-  
րաք տըրպեցին և հպարտ կաղնին ցած  
ընկաւ, ճըղնակոտոր եղաւ:

Քամին անցկացաւ: Մասրի թփերը նո-  
րից բարձրացրին իրանց գլուխները:

Առած:—Ո՛վ որ փքանայ, շուտով չքանայ.

**ՍՈՒՐԲ ԾԱՌ.**

Ելնեմ ծառը զարդարեմ,  
Վէրգամ տակը միխիթարեմ.  
Հաւի վառիկը մորթեմ,  
Տանեմ գետը լուանամ,  
Եփեմ ու չորանին տամ,  
Զորանն ինձ մի ոչխար տայ,  
Ոչխարն Աստուծուն տամ,  
Աստուած ինձ մէկ եղբայր տայ:

Եղբայր, եղբայր, ջան եղբայր,  
 Ջանըս քեզ մատաղ, եղբայր.  
 Կաբայ եմ կարել, կարճ է եկել,  
 Բուզմայ եմ շարել, խոչ է եկել,  
 Ճընճ-ղուկի լեզուն մեղրով  
 Քեզ համար եմ տապակել:

Առաժ:—Քոյն ասեց եղբայր ունիմ, եղբայրն ասեց քոյք չունիմ.

ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ.

Լինում է, չի լինում մի այժ: Այս այժը անտառումը իրան համար տուն է լինում եւ իր զաւակներին—փոքրիկ ուլիքի հետ բնակւում է նրա մէջ: Ամեն առաւօտ մայրը դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ծագերին. «Ո՛րդիք, դըռները փակեցէ՛ք, հանգիստ կացէ՛ք եւ եթէ դըրսից մարդ գալու լինի, դուռը բաց չ'անէ՛ք»: Ասում է ու գնում: Գաշտումը լաւ արածելուց, կուրծք կաթնով լցնելուց յետոյ, այժը տուն է գալիս: Տան դըռները փակ են: Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում.

Չալիկ-մալիկ ուլիկներ,  
 Չալ-պըտուրիկ այծիկներ,  
 Ելէ՛ք բացէ՛ք տան դուռը,  
 Պատրաստ է ձեր ապուրը:

Ուլերը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց եւ կրկին գնում է արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. նա մտքումը դնում է, որ խաբելով ներս մտնէ ուլիքի փառախը, երբ մայրն այնտեղ չըլինի: Մի օր, երբ այժը դուրսն է լինում, գայլը կամաց կամաց գալիս է, թաթով դռանը խփում ու կանչում.

Չալիկ-մալիկ ուլիկներ,  
 Չալ-պըտուրիկ այծիկներ,  
 Ելէ՛ք-բացէ՛ք տան դուռը,  
 Պատրաստ է ձեր ապուրը:

Ուլերը մի լաւ ականջ են դնում. նրանք հասկանում են որ դուռը թըրխկթըրխկացնողն իրանց մայրը չէ եւ պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորի՛ր հեռացիր այդտեղից. մեր մայրը բարակ ձայնով ու քաղցր է մըկըկում, դուռն էլ պոզերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց չեն անում: Գայլը թողում է հեռանում է. Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը. նա գովում է ուլիքին, որ դուռը բաց չեն արել: — «Դուք շատ լաւ էք արել, որդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ նա ձեզ ամենիդ էլ կ'ուտէր:

11. ԱՂԵԻ, ԲԵՐԱՆԻ, ԴԱՍՏԱԿԻ ԵՒ ԳԱՐՇԱՊԱՐԻ ՄՍՍԵՐԸ.

Աչքի մասերը՝ բիբ, ծիածան, սպիտակուց, կոպեր, արտեւանունը:  
 Բերանի մասերը՝ շրթունքներ, ծնօտներ, լընդեր, առամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող:  
 Գաստակի մասերը՝ մատներ, ալի, մատնարմատներ:

Գարշապարի մասերը՝ պատճանդան, կը-  
բունկ, մատներ, ձիաք:

Առածներ:—Լեզուդ չուանի դիր:—Լեզուի տակին  
ոսկոր չըկայ, որ սուտ ասելիս ծակի:—Սուտ ասողի տունը կը-  
բակ ընկաւ, ո՛չ ոք չըհաւատաց:—Օձի կծածը կըսաղանայ,  
լեզուի կծածը չի սաղանայ:

Հանելուկներ:—1. Փոքրիկ պատուհան, շեղով լիք:

2. Չորս մայր կային նմանակ, ունեին հինգ հինգ գառակ,  
հինգը մեկ մօր էին որդիք, հինգը նրանց եղբօր որդիք. տա-  
սըն էլ մօր եղբօր որդիք:

ԾՈՅԼ ԵՒ ՋԱՆԱՍԻՐ.

—Այսօր խաղամ, վաղը կըսովորեմ, ատում է ծոյլը:

—Վաղը կըխաղամ, այսօր սովորեմ, ատում է ջա-  
նասէրը:

Ծ ո յ Լ ա ղ ջ Ի կ ը . — « Բանն թո՛չ կ'անեմ, կեղտոտ է,  
բամբակը կորըզոտ է, մետաքս պիտի՝ որ մանեմ, մաս-  
տակ պիտի՝ որ ծամեմ, կտերը տիտիկ անեմ, անցնողին  
մտիկ անեմ, ուտեմ խմեմ, մթնի քնեմ »:

Ծ ո յ Լ տ ղ ա ն . — « Շորերս հա՛լիք, թէք զցիք, ծած-  
կիք ինձ ու խաչակնքիք վրաս, լետոյ ես ինքս կըքը-  
նեմ »:

Աչքը բեմի մասն է, խոյն բի՛բը : Անը գետնի մասն է,  
խոյն բեմի : Բարշապարը արի մասն է, խոյն աստուածորանի :  
Բեմի գլխի մասն է, խոյն գլուխը : Ծիածանն աչքի մասն է,  
խոյն աչքը . արամանը . կրակն . արմը . արարանը .  
ծնունդը : Սարենի լուսն է, խոյն կաշին : Կաթն աման է, խոյն

փլու՛ւր : Օչը սողուն է, խոյն ճարերը . չին . վազը . մածունը . արօ-  
րը . բաղ կալուսը . . .

ՄԻԿ ԵՒ ԵՐԿՈՒ.

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու:  
Ինչի՛:

— Ինքդ հասկացիր. աւելի լսիր եւ սակաւ խօսիր:  
Բերան մէկ ունինք, իսկ աչքեր՝ երկու:

Ինչի՛:  
— Երկուսով նայիր, երկու մտածի՛ր, մէկ պա-  
տասխանի՛ր:

Բերան մէկ ունինք, իսկ ձեռքեր՝ երկու:  
Ինչի՛:

— Ինքդ հասկացի՛ր. երկուսով գործի՛ր, մէկով  
վայելի՛ր:

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է.

Փայլուն արեւը արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց, թագկացաւ,  
Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան,  
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան:  
Ամեն մարդ գնաց, իր տունը հասաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ:  
Միայն խեղճ որբը չ'ունի հայր ու մայր,  
Չ'ունի բարեկամ, ո՛չ քոյր, ո՛չ եղբայր.  
Անտէր մնացած՝ Աստուծոյ կամքին,  
Խեղճը նընջում է փողոցի միջին:

### ՈՉԽԱՐԸ ԵՒ ԳԱՅԼԸ:

Մի անգամ ոչխարը գնաց առուակի մօտ՝ որ ջուր խմի: Այդ ժամանակ միենոյն առուակից ջուր էր խմում գայլը: Գայլը վերեն էր կանգնած, ոչխարը ներքևը: Չար գազանը կամեցաւ ոչխարին ուտել: Նա վերեից ձայն տուեց. «է՛յ, դու, ի՛նչպէս ես համարձակվում ջուրս պրդտորել. այդ բանի համար ես քեզ իսկոյն պատառ-պատառ կ'անեմ»:

—Տէր իմ, կանչեց ոչխարը, ի՛նչպէս կարող եմ քո ջուրը պրդտորել. ես ներքևն եմ կանգնած, իսկ դու վերեիցն ես խմում:

«Պրդտորում ես, թէ չես պրդտորում, այդ միենոյն է, ես քեզ պէտք է ուտեմ: ձեր ցեղը միշտ թշնամի է եղել ինձ. երեկ ես ուզում էի մօտենաւ հօտին, քո հայրն էր, որ շներին իմաց տուեց. նրանք յետեիցս ընկան, քիչ մնաց պատառ-պատառ էին անում»:

—Ես հայր չունիմ, տէր, հայրս վաղուց է մեռել:

«Ուրեմն մայրըդ կըլինէր»:  
—Մայր էլ չունիմ. մայրս չէնց այն օրը մեռաւ, երբ ինձ ծնեց:

«Ուրեմն ազգականներիցդ մինը կըլինէր. ինչ էլ որ լինի, դու միշտ մեղաւոր ես իմ առաջ»:  
Այս ասաց չար գազանը և անմեղ ոչխարին խեղդեց ու լափեց:



ԱՐՋԻ ԹԱԹԸ.

Գիւղացիք թափարգ սարքեցին եւ մի արջ բռնեցին: Արջին սպանելով չըսպանեցին, միայն կացնով նրա թաթը կրորեցին: Երեք օտնանի արջն էլ կաղի տալով փախաւ, գնաց: Մի խեղճ պառաւ խընդրեց, որ արջի թաթը իրան տան. խուզեց նրա վրայի մազը եւ կաշին էլ մաշկեց: Պառաւը միտը կրակին

դրեց եփելու, ինքն էլ նստեց կաշուի վրայ եւ սկըսեց մանել նրա մազը: Մանեց—մանեց մինչեւ կէս գիշեր: Կէս գիշերին՝ մէկ էլ տեսնես, մի ձայն է լսուում՝ մի բան լուսամուտի տակ թըմիթըմփացնում, ջրկէջրկացնում է:

Պառաւր լուսամուտից դուրս է նայում եւ ինչ է տեսնում:—Տեսնում է որ թաթը կտրած արջը կաղի տալով, մօտենում է խորճըթին:

Պառաւր լեղին պատըռուեցաւ. նա կենում էր մենմենակ գիւղի մի ծայրում: Ի՞նչ անէր, ի՞նչ չ՛անէր, արջից ի՞նչպէս ազատուէր: Արջը քիչ էր մընացել, որ ներս մտնէր. նա արդէն տրփտրփում էր որ դուռը գըտնի, կրճնկահահան անի: Ել ուրիշ հընար չըկար. պառաւր թոնրի բերանը բաց արեց ու ինքը բարձրացաւ ամբարի գլուխը: Արջը գտաւ դուռը, կրճնկահահան արեց, ներս մտաւ խորճիթը եւ սկըսեց միթնումը պտուտ պտուտ անել. մին էլ ի՞նչ—թըրճփ—թոնրի մէջն ընկաւ:

Պառաւր ցած թռաւ ամբարի գլխիցը, ծածկեց թոնրի բերանը եւ գնաց հարեւաններին կանչեց: Հարեւաններն եկան եւ արջին սպանեցին:

**12. ԳԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆԸ.**

Աչքով տեսնում ենք առարկան. ականջով լսում ենք նրա ձայնը, քիթով նրա հոտն ենք իմանում, լեզուով—համը, իսկ մատներով շօշափում ենք և իմանում նրա պընդուլթիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը, անհարթութիւնը . . .

Տեսողութեան գործարանն աչքն է. լսողութեան գործարանը . . . հոտութեան գործարանը . . . շօշափողութեան գործարանը . . . շաշակի գործարանը . . .

Առածներ.—Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ բաներ է լսում:—Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:—Արիչն աչքը բեղ համար լոյս չի տալ:

Հաւն էլ ու կ. Փետուրով կըցանեն, աչքով կըքաղեն, Փրլուխով կ'ուտեն, մտքով կըմարսեն:

Կայտով հարում էն, ինչ սղոցով: Ի՞նչ էն անում ասեղով. փըրով. արջով. մանգաղով. սանրով. քանակով. աստա-աստաղով. սղոցով. լըրով. դըրով. մարշով. հողակով . . .

Հինգում էն (ինչո՞ւ) . հոտարում էն. գերում էն. հարում էն. սղոցում էն. փրում էն. երկալը ծէծում էն. սրում էն. հարում էն. շարում էն. փորում էն. արդում էն. արդում էն . . .

**ԿԱՂՆ ՈՒ ԿՈՅՐԸ.**

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սրընթաց առուակով: Ի՞նչպէս անէին: Կոյրը կաղին շալակեց և երկուսն էլ ապահով անցկացան:

**ԱՌԱՒՅՑ.**

Փայլուն ճաճանչով արեւելք ծածկուեցաւ. Գեաի մօտ գիւղի կրակը հանգաւ. Գաշտի ծաղիկները ցօղով ծածկուեցան. Տաւար ու ոչխար արօտ դուրս եկան.

Թանճը մեզերը երկրից հեռացան.

Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.

Մարդիկ զարթեցան, գործը ձեռք առան.

Սրեւըն ելաւ, աշխարհ բերկրեցաւ:

Ո Ջ Խ Ա Ր .

I. Գարնան վերջերում հովիւը խուզեց իր ոչխարները: Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին:

Աստուած խղճաց ոչխարների վրայ և աշխարհ ուղարկեց արևի տաք ճառագայթներն ու ջերմ քամին: Ոչխարները տաքացան և ուրախ ուրախ վազեցին դէպի դաշտը. իսկ աշունքագէժ նրանց բուրդը նորից դուրս եկաւ:

II. Մանուկներն ամբողջ ամառ ուրախ զուարթ խաղում էին: Զմեռն եկաւ և նրանք չըկարողացան առաջուայ պէս շուտ շուտ դուրս վազել: Տխուր նստոտած էին լուսամուտների առաջ և նայում էին դէպի դուրսը, դուրսն էլ ձիւնը քուլայ-քուլայ էր անում: Մայրը գնեց ոչխարի բուրդը, թել մանեց և փափուկ գուլպաներ ու թաթմաններ գործեց իր որդոց համար, լետույ շալ գործեց և շալից նրանց համար շորեր կարեց: Այնուհետև մանուկները տաք հաքնուեցան, համարձակ դուրս վազեցին և ուրախ զուարթ սկըսեցին ձնագունտի խաղալ:

ՏՂԱՅՈՅ ԱՂՕԹՔ.

— «Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի, Դու ինձ ամեն օր տաս հազար բարի՝ Կեանք, լոյս, կերակուր, հայր եւ քաղցրիկ մայր, Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր, Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ քեզի, Առջեւդ կրնկնիմ, կենամ աղօթքի. «Շնորհըդ տուր ինձ, որ ծնողներիս, Ուսուցիչներիս եւ իմ մեծերիս Կինիմ՝ սիրելի, իսկ Քեզ հաճելի»:

ԿԻԹԻ ԿՈՎ:

Մարդու մէկը մի կով է ունենում: Կովը կաթնով կերակրում է նրա բոլոր ընտանիքը: Տանտիկինը կաթնից մածուն է մէրում: մածուներ պատրաստի կերակուր է խեղճի զաւակների համար: Կաթնից ու մածնից խնոցի է հարում տանտիկինը՝ իւրը հանում պահում, թամն էլ եփում, կերակուր շինում: Կովի կաթնից պանիր էլ են շինում, ձմեռուայ համար պահում: Այսպէս՝ կաթնատու կովը գիւղացու համար մեծ հարստութիւն է: Մեր ասած կովն էլ կաթնատու կով էր. օրէնը երկու անգամ կրթ-



վում էր նա և ամեն անգամ մի մեծ կովկիթ կաթն էր սալիս: Մի անգամ գիւղացին հիւրերի էր սպասում. խնամիքը հարեան գիւղից տեսութիւն պիտի գային: Կաթը շատ պիտի հարկաւորուէր. պէտք էր թարմ կարաք, սեր, մածուն պատրաստել պատուաւոր հիւրերի համար: Ինչ անէր տանտիկինը: Մտածեց-մտածեց խելօքը և վճռեց, որ մի երեք-չորս օր չըկթէ կովը. «Յետոյ վերջին օրը հինգ-վեց կովկիթ միանգամից կըկթեմ», ասաց նա: Բայց ինչ, երեք-չորս օրից յետոյ էրբ ուզում էր կթել, տեսաւ որ ցամաքել է կովը. չըկթելուց կաթը յետ էր տուել կովի ծծերում: Խեղճ տանտիկինը նոր հասկացաւ, որ չըզործածելուց ամենայն ընդունակութիւն բխանում է:

13. ՄԱՐԴԻԿ, ԿԵՆԴԱՆԻՆՆԵՐ, ԲՈՅՍԵՐ, ՀԱՆՔԵՐ.

Մարդիկ՝ հայր, մայր, եղբայր, քոյր. հօրեղբայր, քեռի. հօրաքոյր, մօրաքոյր. ծերունի, պառաւմանուկ, տղայ, աղջիկ. կին, վաճառական, աղքատ...



Կենդանիներ՝ գազաններ, թռչուններ, ձրկներ, սողուններ, միջատներ, խեցգետիններ, սարգեր: Բոյսեր՝ ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, բանջարեղէններ, սունկեր, մ մուռներ:

Հանքեր՝ մետաղներ, քարեր, հողեր, աղեր:

Առածներ:—Ինչ չի ծնում, նա չի մեռնում:—Երկաթը տաք-տաք կըծեծեն:—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

Հանելուկ:—Էն ինչն է որ՝ առաւօտեան չորս ոտի վրայ է մանգալիս, աշիկն երկու, իսկ երեկոյեան երեք:

Շուտասելուկ:—Միտք մբան ծերին, ծով աւտի միտք ծուռ:

Կաղնի ծառ է, իսկ հարկն լաւի է:—Ձիւ չորհրդանի ինչ-որանի է, իսկ ծիծեռնան ինչ. բանը փորձի է, իսկ բաղիւմ լաւալ. գնալիս խոյալի է, իսկ իլաւը. քանոնը դաստիան

առաջնայ է, իսկ ճորճը . բարը ևսուան է, իսկ օճը . նաղան-  
 թը բանջարանայի բոյս է, իսկ ցորենը . առաջուր խոտ է, իսկ  
 պիւնտը . երկաթը հանք է, իսկ բլեղը . առիւծը վայրենի  
 գաղան է, իսկ ռոշարը . պատելու չափն է, իսկ գործը . աղու-  
 քը . խոզը . գարնան . գրիպն . բաժանիչը . վեճը . սեղանը . . .

Աղբարը ճարդ է . ևճիւր . ևսուանը . գիրքը . սար-  
 քը . ճանաչանը . երկաթը . եղբայրը . ծանրը . ճանաչուր .  
 առանկը . գաղաբը . ևսուանը . խոտը . աղը . հայրը . օրերուր .  
 ճեպուրը . ճեղանն . հոշը . . .

**Պ Ս Ա Կ Ն Ե Ր**

(Պար — երգ):

**Վարդէ պսակ.**

Վարդ ծաղկին լինինք նման  
 Եւ օրինակ հեզութեան,  
 Թող վարդը հանգստանայ  
 Մեր մատաղ սրտի վրայ:

**Կաղնեայ պսակ.**

Կանաչ խոտը դաշտերի  
 Մեր սրտին է սիրելի.  
 Թող ճիւղը կաղնի ծառին  
 Պսակ լինի մեր գլխին:

**Մանուշակէ պսակ.**

Ազնիւ սիրուն մանուշակ,  
 Համեստութեան օրինակ,  
 Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,  
 Բոքընքոյշ հոտ անուշիկ:

**ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է.**

Աքաղաղն ու հաւը եղբայրացան: Աքաղաղը գնաց  
 այգին և խակ պտուղներ էր ուտում: Հաւն էլ ասում  
 էր նրան. «Մի ուտիր, եղբայր, վնաս կըտայ, մի ու-  
 տիր»: Աքաղաղն ականջ չըզրեց. նա այնքան կերաւ, որ  
 հագիւ կարողացաւ տուն հասնել:

— Երբ տուն հասան, քաղաղն սկսեց գանգատուիլ.  
 — «Վայ, բուրբիկ, փորս ցաւում է», ասում էր նա:  
 Հաւը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանա-  
 նեխ շաղախեց՝ փորին դրեց և ցաւն անցկացաւ:

Աքաղաղն առողջացաւ և գնաց դաշտը: Այնտեղ  
 նա թռչկոտաց, վազվրզեց և բոլորովին քրտնած՝ մօտե-  
 ցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ: Հաւը խրատում  
 էր նրան. «Մի անիր, եղբայր, ասում էր, սպասիր, քիչ

Հանգստացիր, յետոյ կըխմես»: Աքաղաղն ականջ չարեց նրան՝ սառը ջուրը խմեց, մրսեց և սկսեց դողացնել: Մեծ դժուարութեամբ կարողացան տուն հասցնել նրան: Հաւը վագեց բժիշկ բերելու: Բժիշկն եկաւ և նրա համար դառը դեղ գրեց: Աքաղաղը երկար ժամանակ պառկած էր անկողնումը:

Չմեռնադէմ աքաղաղն առողջացաւ և գնաց գետի ափը խաղալու: Գետը ծածկուած էր բարակ սառուցով: Նա կամեցաւ սղղալ սառուցի վրայ: Հաւն այս անգամ էլ խրատում էր նրան. «Մի անիր, եղբայր, դեռ սառուցը բարակ է, կըկտորուի և կըխեղդուիս»—ասում էր: Բայց աքաղաղը չըլսեց և սկսեց սղղալ, խաղալ: Յանկարծ սառուցը կտորուեցաւ և մեր անհնազանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղդուեցաւ:


Եւստի Կարոյ զոյգը զարմացաւ ինչ որ տեսաւ: Երբ տեսաւ որ Կարոն ընկած է ջրի մէջ, Կարոն շտապով վազեց դէպքի վրայ: Երբ տեսաւ որ Կարոն ընկած է ջրի մէջ, Կարոն շտապով վազեց դէպքի վրայ:

**14. ՕՐՈՒԱՅ ՍԱՍԵՐԸ, ԾԱԲԱԹՈՒԱՅ ՕՐԵՐԸ ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.**

Օրուայ մասերը՝ ցերեկ, գիշեր, առաւօտ, կէսօր, երեկոյ, կէս-գիշեր:

Շաբաթուայ օրերը՝ կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:

Տարուայ եղանակները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ:



Առածներ. — Էսօրուայ բանը էգուց մի՛ գցիր: — Էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը: — Վեց օր գործի՛ր: Եօթներորդ օրը հանգստացի՛ր:

Հանելուկ. — Մի մանուկ կար՝ գօրեղ հրեղին, խմեց հաւացրեց շուրք գետից. բոլոր մարդկանց արաւ նա քին՝ հրեմեց վերջուց խտտը դաշտից:

Գարունը պարտաւ էր շահանքին է: Յերէկը. կիրակին. ամառը. երկուշաբթին. գիշերը. չորեքշաբթին. ամառու. երեքշաբթին. աշունը. ուրբաթը: Օրը ժամանակի չափ է. շաբաթը շաբաթուայ մէջըն օրն է. արբանքը. հինգշաբթին. չմեռն . . .

**ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏ.**

Իրիկնաժամի զանգակը տուին,  
Բարեպաշտ մարդկանց ժամ՝ հրաւիրեցին.  
Վաղը կիրակի՛ Աստուծու օրն է,  
Վերջացրէ՛ք գերծերդ, հանգստեան ժամն է:

Լըսեց գիւղացին դաշտումն այս ձայնը՝  
 Դէպի տուն քշեց եղն ու գութանը:  
 Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին  
 Լցուած մարգիկը ալօթում էին.  
 Դառը քրտընքով գնած մոմերը  
 Սուրբերի առաջ մեղմ վառվում էին:

ԵՐԻ Ե ԼԻՆՈՒՄ.

Չիւնը հալվում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում: օրը երկարում:—Այս էրբ է լինում:

Ամիսներն անցան, օրերն տաքացան, ամպեր բարձրացան, անձրև թափեցին: Արտերն հասել են, հնձող են կանչում:—Այս էրբ է լինում:

Մարգիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափվում, իսկ մութ գիշերը չորս կողմը բռնում:—Այս էրբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան. ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարգիկ ներս մտան իրանց տները, իսկ գազանները—իրանց բները: Դուրսը սաստկուեցաւ քամի է փչում և ձիւնի փոշիով աչքերդ լցնում:—Սասցէք, տեսնեմ, այս էրբ է լինում:

Չ Ի Ի Ն .

Երբ որ ձիւն կուգայ, ես կուրախանամ,  
 Որ դուրս պիտ ելնեմ, դահուկ պիտ խաղամ. . .  
 Բայց տեղս ո՛րքան աղքատ տղայք կան,  
 Որ տաք հալաւից կարօտ կըմընան:

Չ Ո Ր Ս Յ Ա Ն Կ Ի Թ Ի Ի Ն .

1. Զմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինն իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ սառուցի վրայ: Գաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Ախ, հայրիկ, ի՛նչ պատուական եղանակ է ձմեռը, որքան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագունտի ենք խաղում, սղղում ենք սառուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք. . . Ախ, ի՛նչ կլինէր՝ որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետրակը և ասաց. «Գրի՛ր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Զմեռն անցկացու: Գարունը եկաւ. Բացուեցան ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամենայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ և բզէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց, իսկ երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր: Ճմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը, և եթէ ինձ մնար, ես կըցանկանայի, որ միշտ գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը և առաջարկեց Գարեգինին, որ իւր ցանութիւնը գրէ: Գարեգինը գրեց

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտը հասել էր և հնձող էր կանչում: Գարեգինը և իւր հայրը գնացին խոտ հնձելու: Քանի որ այրը վեր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինն իրան գուարձութիւններ էր կատարում. ձուկն էր բռնում գետակից, հատապտուղներ էր հաւաքում, հոտուէտ խոտերի վրայ գլորվում էր: Երեկոյեան՝ տուն յետ դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես

անչափ ուրախացայ: Երանի՛ թէ ամառը վերջ չունենար: Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ: Գ. Վերջապէս եկաւ և աշունը: Այգիներում լաւ լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկևիլը, խաղողը . . . Մարգիկ գուրս էին եկել այգեկութի: Գարեգինն էլ իւր ծնողաց հետ զնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվրզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և պտուղներից բերանը գցելով՝ անուշ անում: Վերջը նա վազեց հօր մօտ և նրա պարանոցովը փաթաթուելով՝ ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է»:

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար էլ միևնույն բանն է ասել:

Պատմեցր ձեր բարձր պատմութիւնը սաղէք թէ քանի զխառը կտորեւ կարգէր յետմեջ սան և չէ ասուած իւրաքանչիւր կտորով:

### 15 ԱՍԻՍՆԵՐ

Ա մ ի ս ն եր . . . յ ու ռ ար, փ ե տր վ ար, մ ար տ, ա պր ի լ, մ ա յ ի ս, յ ու ն ի ս, յ ու լ ի ս, օ գ ո ս տ ո ս, ս ե պ տ ե մ բ եր, հ ո կ տ ե մ բ եր, ն ո յ ե մ բ եր, գ ե կ տ ե մ բ եր:

Չ մ եր ա յ ի ն ա մ ի ս ն եր. գ ե կ տ ե մ բ եր, յ ու ն վ ար, փ ե տր վ ար:

Ա մ ար ա յ ի ն ա մ ի ս ն եր. յ ու ն ի ս, յ ու լ ի ս, օ գ ո ս տ ո ս:

Ա . ն ա ն ա յ ի ն ա մ ի ս ն եր. ս ե պ տ ե մ բ եր, հ ո կ տ ե մ բ եր, ն ո յ ե մ բ եր:

Գ ար ն ա ն ա յ ի ն ա մ ի ս ն եր. մ ար տ, ա պր ի լ, մ ա յ ի ս:

Յ ու ն վ ար լ չ մ եր ա յ ի ն ա մ ի ս է, ի ս է հ ո յ ի ս . . . Ս ե պ տ ե մ բ եր լ ա շ ն ա ն ա յ ի ն ա մ ի ս է, ի ս է փ ե տր վ ար լ . . . Մ ար տը փ ար ն ա ն ա յ ի ն ա մ ի ս է, ի ս է յ ու ն ի ս . . . Յ ու լ ի սը ա մ ար ա յ ի ն ա մ ի ս է, ի ս է հ ո կ տ ե մ բ եր լ . . . Ա պր ի լ լ լ . օ գ ո ս տ ո ս . գ ե կ տ ե մ բ եր լ . ն ո յ ե մ բ եր լ . . .

Տարին քանի ամիս ունի. ո՞րն է առաջին ամիսը: ո՞րն է վերջինը: ո՞րոնք են գարնանային ամիսները: Ասացէք ամառային ամիսները: ո՞րն է աշնանային վերջին ամիսը . . . ո՞րն է առաջինը, միջինը . . .

### ԳԻԻՂԱՑԻՆ ԵՒ ԱՐՋԸ.

I. Գիւղացին և արջը բարեկամացան և միասին խորհուրդ արին, որ կարտոփիլ ցանեն: Գիւղացին ասաց. «Արջ բարեկամ, արմատն ինձ գլուխը քեզ»: Արջը համաձայնեցաւ: Շատ լաւ կարտոփիլ գուրս եկաւ: Գիւղացին վերառաւ արմատի կարտոփիլները, իսկ վերեւի չոփերը տուեց արջին: Արջը շատ էլ փընթփընթաց, բայց թնչ կարող էր անել»:

II. Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. «Արջ եղբայր, արի՛ էլի միասին ցանք անենք»:

— Լաւ, պատասխանեց արջը. միայն այս տարի ես արմատը կը վերառնեմ, իսկ դու վերցրու՛ վերեւի մասը:

Գիւղացին համաձայնեցաւ, բայց այս անգամ կարտոփիլի փոխանակ ցորեն ցանեց: Շատ առատ ցորեն

դուրս եկաւ: Գիւղացին վերառաւ հասկերը, իսկ արջին մնաց արմատները:

Ի՞նչ բայսեր գիտէք, որոնց արմատն ենք ուտում:

Ի՞նչ բայսեր գիտէք, որոնց վերին մասն ենք ուտում:

Մ Ա Յ Ի Ս.

Մենք արժանացանք ուրախ մայիսին,

Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.

Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը

Ուրախ ու զուարթ առաջ վազեցին:

Տերեւջատ ծառի ստուերների տակ

Թռչուններն իրանց երգերն են երգում,

Կանաչ դաշտերի փափուկ մարգերում

Պէտքէս կենդանիք ուրախ արածում:

Աչքը և շինը դէմքի ճառերն են, իսկ աղբյուր և պտուղն էր .  
դաստաղը և արմատն էր ճեւեռի ճառերն են, իսկ հարձակ և սիրտը .  
Գլուխը և պարանոցը ճարձի ճառերն են, իսկ սպիտակաշոր և ծիւ-  
ծաւոր . Բիթը և արտաստաւորն աչքի ճառերն են, իսկ սասաներն  
ու ջեղձն . Տարբը և ապրիլը Գարնանային ամիսներ են, իսկ սեպ-  
տեմբերը և հոկտեմբերը . յունիսը և յուլիսը ամառային ամիսներ  
են, իսկ յունվարը և փետրվարը . Գայլը և արջը Գարնաններ են,  
իսկ ծառը և խոտը . տունը և ծաղիկը Բայսեր են, իսկ աղը և  
երմուկը . սեղանը և պահարանը . արջը և խոզը . հալը և  
ջուրը . Գրիչը և ճապիտը . կերակրին և երեսաշաբլին . Գա-  
րնան ու ջեղձն . . .

Հ Ո Վ Տ Ե Մ Բ Ե Ր Ի Ն.

Սրեւն իւր ոյժը կորցրած՝

Սակերի տակ ծածկուեցաւ,

Սասիկ քամին ողջ ծառերի

Տերեւները վերածաւ:

Շատ թռչուններ եւ թիթեռներ

Անյայտացան դաշտերից,

Ծառը չունի կանաչ տերեւ.

Նա՞ դրկուած է իւր զարդից:

Երկնքումը ամպի քուլէքն

Սնձրեւներ են պատրաստում,

Անտառը իւր տերեւներով՝

Առուն տխուր քրչքրչում:

Ինչի՞ դաշտերի սողուններ

Եւ վայրենի թռչուններ

Շտապում են իրանց համար

Մի ապահով տեղ գտնել:

Մ Ե Ղ Ո Ի Ն Ե Ր.

Գարունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցան և փոքրիկ տերեւներ առաջ բերին:

Ահա մեզուն էլ զարթեց ձմերալին քնից, սըր-բեց աչերը բրդոտ թաթիկներով, զարթեցրեց ընկերներին և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն թէ ձիւնը, սառուցը և հիւսիսալին սառը քա-մին անցել են:

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Սիրուն ծիրանի, չունիս մի բան խեղճ մեղուներիս համար. մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք»:

— Ա՛յ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկները դեռ ևս պահուած են կոկոններիս մէջ: Գնացէք՝ նշենուն հարցրէք:

Մեղուները թռան գնացին նշենու մօտ: «Սիրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»:

— Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց նշենին. այսօր ինձ վրայ ոչ մի բացուած ծաղիկ չըկայ. իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցան նրա փայլուն գլխին, բայց նա էլ ոչ հոտ ունէր և ոչ մեղր:

Մեղուները տրտում և քաղցած կամենում էին լետ դառնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքոյշ մուգ կապուտ ծաղիկ: Սա մանուշակն էր: Նա բաց արաւ մեղուների համար իւր կոկոնները, որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցր հիւթով: Կերան-խմեցին մեղուները և ուրախ զուարթ լետ դարձան տուն:

Մ Ե Ղ Ո Ւ .

Հա՛, ծագեցաւ արեգակը,  
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը՝

Մեղուն թողեց իր փեթակը,  
Տըզտըզալով-տըզտըզալով:

Մեղուն թռաւ ծաղիկէ ծաղիկ,  
Մեղր առաւ քաղցր-անուշիկ,  
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ,  
Պըզպըզալով-պըզպըզալով:

Անուշ մեղրը՝ մանր տղոց,  
Գեղին մոմը՝ ամեն սրբոց,  
Իսկ չարերին կըճ ու խայթոց,  
Կըսկըծալով-կըսկըծալով:

16. Տ Օ Ն Ե Ր .

Աստուածամօր ծնունդը. Աւետուածն. Քրիստոսի ծնունդը եւ Մկրտութիւնը. Տեառընդառաջ. Մազկազարգ կամ Քրիստոսի Գալուստը. Զատիկ կամ Սուբբ Յարութիւն. Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդափառ. Վերափոխումն Աստուածածնի. Խաչվերաց . . .

Ա ո ա ծ ն եր: — Կարմիր ձուն զատկին կըսաղի: — Տարին մի զատիկ, այն էլ նաւակատիկ: — Ազոաւի բերանով Վարդավառին ձիւն կըգայ:

Հ ա ն ե լ ու կ ն եր: — Երեք ոտքեմ, մէկ մօրուսեմ, կայներ կուսեմ մեր հօր քիսեմ: — Երկեմ աղիք, ձերք ծաղիկ:

Ն Ո Ւ Ր Ի Ն

(Անճրեաբեր)

Նուրին - Նուրին եկել է,  
Աջբահուրին եկել է,  
Շիլա շապիկ հագել է,  
Կարմիր գօտիկ կապել է:

եղ բերէք՝ վարսը քսենք,  
Ջուր բերէք՝ գլխին ածենք,  
Մեր Նուրինի փայլ տուէ՛ք,  
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

Ճ Օ Լ Ի

(Արեւաբեր)

Ճօղի-ճօղի, ճօլ չըկայ,  
Խաւիճ անեմ, եղ չըկայ,  
Ճօղին ընկել է ծովը,  
Ծովիցը հանոց չըկայ:

Չուան բերէք՝ դուրս հանենք,  
Թող բերէք՝ կըցան անենք,  
Չու բերէք՝ թաթին դնենք,  
Եղ բերէք՝ վարսը քսենք:  
Խոփը պատումն է ժանգոտել,  
Չեւիչը տափումն է ժանգոտել,  
Կանանչ դաշտերին ենք կարօտ,  
Կարմիր արեւին ենք կարօտ:

Ճ Չ Ա Ն Ա Կ

(Ձատկական երգ)

Ճը՛ւ-ճը՛ւ ճըջանակ,  
Աստուծոյ դուռը բանանք,  
Դուրսը ժամ ասենք,  
Ներս գանք, պատարագ անենք:  
Սեւ եզը մատաղ անենք,  
Պողերը չարդախ անենք,  
Տակը նստենք քարգաճ անենք:

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Ր Գ Ս Ի Ե Ր Գ Ը .

Ալէլուիա, ալէլուիա,  
Հըրէս եկաւ մի ձիաւոր,  
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,  
Աջու ձեռին Աւետարան,  
Ձախու ձեռին Սաղմոսարան,  
Աջով գրէր ձախով ջընջէր,  
Ձախով գրէր, աջով ջընջէր,  
Տարեկամ, երեխայիգ անունն ի՞նչ է,  
Ձեր . . . թախտին նստի,  
Փափուկ ձեռը ջէրը տանի,  
Հինգ աբասին ջէրից հանի,  
Սուրբ Սարգսին մատաղ անի:

Ծ Ն Ն Դ Ե Ա Ն Ե Ր Գ .

Ալէլուիա ալէլուիա,  
Ձատիկը արեւուսով,  
Ջրօրհնէքը ճրագլուսով,  
Թէ քնած էք, վեր զարթեցէք,  
Թէ զարթուն էք, լաւ խեցէք:  
Մարիամ եկաւ լալով-լալով,  
Լալով-լալով, մղկըտալով,  
Լուսաթաթախ մանուկ ծնեց,  
Ծով ու ցամաք լուսով պատեց:  
Ձեր տունըն է չորեքսիւնի,  
Չորս սիւներից ո՞րն է սալի,  
Սալը չարակամի սրտին,  
Ասլը բարեկամի որդին:



Տուներ շէն, տուներ շէն,  
 Ձեր տղայոց անուան ի՞նչ է.  
 — Հայկ ու Արամ է:  
 Գրանք նստեն մէկ սեղանի,  
 Գինի խմեն Նախըջփանի,  
 Ձեր թշնամուն գետը տանի,  
 Գայլագուռը աչքը հանի.  
 Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ եղ՝  
 Տուէ՛ք, Ալեյուխան տանի:

ԿԻՍԼԱՆՋԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

I.

Լինում է չի լինում մի պառաւ: Այս պառաւն ունենում է երեք տղայ՝ երկուսն առողջակազմ, իսկ երրորդը պակասաւոր: Նրանք ապրում են խեղճ, աղքատիկ: Մի օր պառաւն ասում է որդոցը. «Սիրելի որդիք, տեսնում էք ինչ չբաւորութեան մէջ ենք. թնջ էք տանը նստոտել, գնացէք, աշխարհս մեծ է, մի գործ բռնեցէք, որ ձեզ համար գոնէ մի կտոր հաց ունենաք»: Եղբայրները խորհրդի նստեցան. թնջ անեն, թնջ չանեն: Միջնակ եղբայրը մեծին ասաց. «Լսել ես, ապէր, ասում են որ այս ինչ անտառում մի վիշապ կայ՝ մեծ հարստութեան տէր, արի գնանք սպանենք նրան և փողերը վերառնենք»: Մեծ եղբայրը համաձայնութիւն տուեց: Փոքր եղբայրը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն:

— Դու ինչք համար ես գալիս, Կիսլանջ, գլխըներիս բեռը լինելո՞ւ. դու տանը կրմնաս, մօրդ կրմը-

խիթարես, մինչև որ մենք լետ կըգանք, ասացին եղբայրները: Յետոյ իրանց մօրը մնաս բարով ասելով՝ նրանք ճանապարհ են ընկնում:

Գնում են գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, հասնում են մի աղբիւրի, որի մօտից ճանապարհը երկուսի էր բաժանվում. մեծ եղբայրը բռնում է մէկ ճանապարհը, միջնակը միւսը:

Գնում է գնում մեծ եղբայրը և պատահում է մի հովուի:

— Բարի աջողում:

«Աստուած բարին»:

— Հովիւ եղբայր, եթէ այս ճանապարհը բռնած գնամ, այս ինչ վիշապի բնակարանին չեմ հասնիլ:

«Կըհասնես, բայց Աստուած ազատէ քեզ այդ բանից. թնջ ունիս դու այդ մարդակերի մօտ»:

— Լսել եմ որ մեծ հարստութեան տէր է. ուզում եմ սպանեմ և փողն ու հարստութիւնը վերառնեմ:

Այս խօսքերը որ լսեց բարի հովիւը, սկսեց քթի տակը փրնթփրնթալ.

«Ահա մի մահկանացու,

Իւր գլխից ձեռք վերառած,

Դատարկ յոյսերից խաբուած,

Կամենում է զոհ լինել

Մեծ վիշապին մարդակեր»:

— Ինչ ես ասում, հովիւ եղբայր. մթթէ կարծում ես որ չեմ կարող սպանել վիշապին: Օ՛, դու ինչ չես ճանաչում:

— «Այ, մարդ, գիտես թնջ կայ, ասում է հովիւը. ես քեզ մի փորձ կառաջարկեմ՝ ես կըկթեմ իմ երկու սկայծե-

Պը, կաթնով կըլցնեմ այս կովկիթը, կըբերեմ, առաջ կը-  
ղնեմ. յետոյ կըհեծնեմ այծերից մինը և կըպտըտեմ հօտի  
շուրջը. եթէ դու այդ միջոցին բոլոր կովկիթը դատարկած  
վինիս, կարող ես վիշապին յաղթել, եթէ ոչ՝ չես կարող:

Պառաւի տղան համաձայնեցաւ: Հովիւը կովկիթը  
լցրեց և սկսեց պտըտել. բայց երբ եկաւ մեր ճանա-  
պարհորդի մօտ, նա կաթնաբրդոշի կէսն էլ չէր կերել:  
Այն ժամանակ բարի հովիւն ասաց նրան.

«Արի, եղբայր, մի անիր,  
Փորձուած հովուիս ականջ դիր,  
Յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ականջ չ'արեց մեր ճանապարհորդը խեղճ հովուի  
խօսքին և առաջ գնաց: Գնաց գնաց և պտտահեցաւ  
մի ուղտապանի:

— Բարի աջողում:

«Աստու բարին: Օտար եղբայր, ո՛ւր ես գնում»:

— Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նրա  
գանձը վերառնեմ:

Ուղտապանն էլ՝ այս որ լսեց, սկսեց երգել.

«Ահա մի մահկանացու,  
Իւր գլխից ձեռք վերառած,  
Գտարկ յոյսերից խաբուած,  
Կամենում է զոհ լինել  
Մեծ վիշապին մարդակեր»:

— Ի՞նչ ես երգում, սուղտապան:

— «Ես այն եմ երգում, որ դու կըգնաս, ինչպէս  
գնացել են շատերը և էլ յետ չես դառնալ. մեծ վի-  
շապը քեզ ողջ-ողջ կուլ կըտայ: Պէտք է գիտենաս, այ  
օտարական, որ նա միայն կարող է մեծ վիշապի հետ

կուլ տալ, ով որ ահա այս ուղտին փչելով գետին կը-  
գլորէ:

Այս ասաց ուղտապանը և մի մեծ ուղտ քաշեց,  
մեր ճանապարհորդի առաջը կանգնեցրեց: Պառաւի  
տղան ուզեց ցոյց տալ իւր ոյժը—փչեց, փչեց, բայց  
ուղտը տեղիցն էլ չըշարժուեցաւ, ուր մնաց թէ վէր  
ընկնէր: Այն ժամանակ բարեօրրա ուղտապանը նորից  
սկսեց երգել.

«Արի, եղբայր, մի անիր,  
Ուղտապանիս ականջ դիր,  
Յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ծիծաղեց մեր ճանապարհորդը բարի ուղտապա-  
նի վրայ և շարունակեց իւր ճանապարհը: Գնաց, գը-  
նաց, վերջապէս հասաւ վիշապի կացարանին: Դռան  
ճեղքից մտիկ արեց և տեսաւ, որ վիշապը նստած է,  
մի ահագին կաթսայ առաջը դրած, ձեռին էլ մի մեծ  
շերեփ՝ ճաշ է ուտում:

Պառաւի տղան կանչեց.

«Վիշապ, վիշապ, դ՛ուրս արի  
Միմեանց հետ կուլ անենք,  
Բաց ու արձակ սրահում  
Զօր-զօրի տանք, կոխ-բռնենք»:

Շատ ուրախացաւ վիշապը, որ մի խեղճ աղամոր-  
դի իր ոտովն եկել է նրա դուռը, և առանց տեղիցը  
շարժուելու՝ ներսիցը պտտախան տուեց.

«Օտարական, քո ձայնից  
Իմ սիրտս կըտրատվում է,  
Բոլոր մարմինս երկիւղից՝  
Ոտն ու ձեռս դողում է:

Աղաչում եմ ինձ խղճա՛,

Մի սպանիր չարաչար.

Մտի՛ր, իմ բոլոր տունս

Քեզ մատաղ է, վերառ, տա՛ր»:

Ճանապարհորդը խաբուեցաւ և միամիտ ներս մըտաւ վիշապի սենեակը: Վիշապը բռնեց նրա վզակոթից և ներքնատան դուռը բանալով՝ ցած գլորեց: «Ինձ, երգի՛ր այդտեղ մի առ ժամանակ, ասաց վիշապը. ես գեռ ևս մի քանի օրուայ պաշար ունիմ ուտելու»:

II.

Միւս առաւօտ վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ գուռը ծեծում և կանչում է.

«Վիշապ, վիշապ, դո՛ւրս արի

Միմեանց հետ կռիւ անենք,

Բաց ու արձակ սրահում

Զօր-զօրի տանք, կոխ-բռնենք»:

Սա ինչ բախտաւորութիւն է, մտածեց վիշապը. երբէք չի պատահել, որ մարդիկ իրանց ոտով իմ դուռըս գան. իսկ հիմա մէկի տեղակ երկուսն է գալիս: Վիշապը ներսից պատասխանեց.

«Օտարական, քո ձայնից

Իմ սիրտս կըտրատվում է,

Բոլոր մարմինս երդիւղից՝

Ոտն ու ձեռս դողում է:

Աղաչում եմ, ինձ խղճա՛,

Մի սպանիր չարաչար.

Մտի՛ր, իմ բոլոր տունս

Քեզ մատաղ է, վերառ, տա՛ր»:

Անծանօթը հպարտ-հպարտ ներս մտաւ: Վիշապն աւզարկեց նրան իւր եղբօր մօտ:

III.

Անցնում է մի քանի ժամանակ. մեր հովուի մօտ գալիս է մի մարդ, մի զարմանալի Կիւլանջ մարդ և հարցնում է, թէ այս ճանապարհով երկու օտարական չեն անցկացել: Հովիւը պատմում է, որ երկու անցուորական, իւր խրատին չըլսելով, գնացին դէպի մեծ վիշապի կացարանը, որ ինչ է նրան սպանեն և փողն ու հարստութիւնը վերառնեն. բայց, աւելացրեց հովիւը, նրանք արդէն վիշապին զոհ կըլինին եղած:

Կէս մէջքանի, մի կռնանի մարդը պատասխանեց. «Այդ անցուորականներն իմ աւագ եղբայրներս էին. այժմ ես գնում եմ, որ նրանց արեան վրէժն առնեմ»: Բարի հովիւը ժպտաց և երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,

Լայն թիկունքով, հաստ վըզով,

Ի՞նչ շահուեցան նրբանից

Թէ դու, Կիւլանջ, ինչ շահուիս»:

Այնուհետեւ հովիւը Կիւլանջին էլ առաջարկեց իւր պայմանը. կթեց սև այծերը, կովկիթը կաթնով լցրեց, բրդեց և դրեց Կիւլանջի առաջ, իսկ ինքը հեծաւ այծերից մինը և սկսեց պտըտել հօտի շուրջը: Որքան զարմացաւ հովիւը, երբ վերադառնալով Կիւլանջի մօտ, տեսաւ որ նա կերել-պրծել է և կովկիթն էլ լպրզտում է:

Հովիւը բացականչեց՝

«Քշտան տարի Հովիւ եմ,  
 Շատ մարդիկ եմ ես տեսել,  
 Շատ մարդիկ հէնց այս փորձով  
 Ես ճանապարհ եմ գրցել,  
 Բայց այսպիսի մի զարմանք  
 Ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել:  
 Գնա՛, եղբայր, Համարձակ,  
 Աստուած քեզ հետ, կարող ես  
 Չար վիշապին սպանել,  
 Փողն ու գանձը վերառնել»:

Առաջ գնաց մեր Կիսլանջը և պատահեցաւ ուղտապանին:

— Բարի աջողում, ուղտապան եղբայր, այս ճանապարհով մօտ օրերս երկու օտարական չե՛ն անցկացել:

— Անց են կացել, պատասխանեց ուղտապանը. ուղորմելիքը գնում էին մեծ վիշապին սպանելու, բայց չէին իմանում, որ իրանց պէս հարիւրաւոր մարդիկ գնացել են և էլ չեն վերագարձել:

Կէս մէջքանի, մի կռնանի մարդը պատասխանեց. այդ անցուորականներն իմ աւագ եղբայրներս էին, այժմ ես կը գնամ և նրանց արեան վրէժը կառնեմ:

— Օ հօ, բացականչեց ուղտապանը և երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,  
 Լայն թիկունքով, հաստ վըզով  
 Ի՞նչ շահուեցան նրանից,  
 Թէ դու, Կիսլանջ, ինչ շահուիս»:

Այնուհետև ուղտապանն էլ առաջարկեց Կիսլանջին իր պայմանը. մէկ ուղտ բերեց, կանգնեցրեց Կիս-

լանջի առաջ և առաջարկեց, որ նրա վրայ փորձէ իւր ոյժը: Կիսլանջն այնպէս փչեց, որ ուղտը հինգ գագ յետուլետ գնաց ու վէրընկաւ:

Ուղտապանը զարմացաւ և ասաց.

«Շատ տարի է ուղտապան եմ,  
 Շատ մարդիկ եմ ես տեսել,  
 Շատ մարդիկ հէնց այս փորձով  
 Ես ճանապարհ եմ գրցել,  
 Բայց այսպիսի մի զարմանք  
 Ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել:  
 Գնա՛, եղբայր, Համարձակ,  
 Աստուած քեզ հետ, կարող ես  
 Չար վիշապին սպանել,  
 Փողն ու գանձը վերառնել,

Գնաց մեր Կիսլանջ բարեկամը, վիշապի տուն հասաւ, դուռը ծեծեց և կանչեց.

«Մարգակեր վիշապ,  
 Գագան ամեհի,  
 Հերիք անպատիժ  
 Մատնես մեզ մա՛հի.  
 Հընչեց քո ժամը՝  
 Ժամ օրհասական,  
 Ես վերջ պիտ դնեմ  
 Կեանքիդ անպիտան»:

Չարմացաւ վիշապը այս լանդուզն խօսքերի վրայ՝ բայց ուզեց Կիսլանջին էլ խաբելով ներս կանչել, ուստի ձայն տուեց.

«Ո՛վ ես դու, տէր իմ,  
 Մարդ ես, թէ վիշապ».

Ձայնդ է ուժգին,  
 Խօսքերդ սարսափ.  
 Բայց ով էլ լինիս,  
 Պատրաստ եմ, ահա—  
 Բաւ է որ կամիս—  
 Դու տէր, ես ծառայ»:

Խելօք Կիսլանջը չըխաբուեցաւ և նորից կանչեց.

«Խարդախ ձևերով  
 Շատ մարդ ես խաբել,  
 Շատին ներս տարել,  
 Մորթել ու լափել,  
 Բայց էլ հերիք է,  
 Պէտք է որ դուրս գաս.  
 Գըլուխս վրկալ,  
 Քեզ կ'անեմ մաս-մաս»:

Բարկացաւ վիշապը, կատաղեց այս համարձակ խօսքերից, դուրս վազեց գայրացած, որ յանդուգն մարդու մեծ պատառն ականջը թողի: Բայց Կիսլանջը վաղուց քաշուել էր պատի տակը: Վիշապը գլուխը դուրս հանեց թէ չէ, Կիսլանջի լըգրանոց թուրը պսպրդաց և վիշապի վիթխարի գլուխը երկու կէս եղաւ: Սարի նման գազանը վէրընկաւ, սատկեցաւ: Կիսլանջը յաղթական քայլերով ներս մտաւ վիշապի կացարանը: Նա անցաւ, պտրտեց բոլոր սենեակները, ամեն քունջուպուջախ նայեց, բայց եղբայրներին չըգտաւ: Երկիւղը պատեց բարե Կիսլանջի սիրտը՝ մի գուցէ ինքն ուշացած լինի, մի գուցէ չար գազանը արդէն լափել է նրանց: Կիսլանջն սկսեց ձայն տալ, կանչել: Այդ ժամանակ ոտների տակից մի խուլ հառաչանք լսեց: Ցած նայեց Կիս-

լանջը և յատակի վրայ դռան պէս մի բան տեսաւ. շտապով բարձրացրեց այդ դուռը, ականջ դրեց և այդ ժամանակ ահա պարզ կերպով լսեց եղբայրների ձայնը, որոնք օգնութիւն էին կանչում: Կիսլանջը ցած թռաւ խսկոյն և աւետեց եղբայրներին գազանի սպանումը: Նրանք զրկախառնուեցան, համբուրուեցան և ճաշեցին միասին. ուտելու առատ պաշար կար գազանի մառանում: Ճաշելուց յետոյ բոլոր տունը պտրտեցին, ման եկան, բայց գանձը չըկարողացան գտնել: Կիսլանջն առաջարկեց, որ սենեակների յատակը մի երես քանդեն: Քանդեցին: Մառանի յատակի տակ մի խոր հոր բացուեցաւ. սա գազանի խաղախն էր: Բայց հորը խոր էր. նրանցից մէկը պէտք է համաձայնէր ներս մտնել: Կիսլանջը յանձն առաւ: Նրա կոնատակերից թոկ կապեցին և ցած թողեցին հորը: Հորի մէջ անթիւ ոսկի կար: Կիսլանջը առաջ մեծ եղբօր պարկը լցրեց, դուրս ուղարկեց, յետոյ երկրորդինը և յետոյ իրանը: Երբոր ոսկով լիքը պարկերը դուրս էին հանած, Կիսլանջը կանչեց, որ թոկը ցած թողնեն, մէջքիցը կապի ու դուրս քաշեն. կանչեց Կիսլանջը, ձայն տուեց. պատասխան չըկալ, մարդ չըկալ. . . :

Եղբայրները, Կիսլանջի ապերախտ եղբայրները, նախանձելով, որ իրանք չըկարողացան վիշապին սպանել, թողեցին իրանց ազատողին հորի մէջ, վերառան ոսկով լիքը պարկերը և ճանապարհ ընկան գէպի տուն: Բայց Կիսլանջը հորի մէջը չըմեռաւ. նա մեծ դժուարութեամբ ոտնատեղեր շինեց հորի պատերի վրայ և շատ չարչարուելուց յետոյ՝ դուրս եկաւ: Ոսկով լիքը պարկը դրած էր հորի մօտ: Կիսլանջը շալակեց պարկը

և շտապեց, որ եղբայրներին հասնի: Գնաց տեսաւ, որ նրանք պառկել են մի ծառի տակ ու քնել: Կամաց-կամաց մօտեցաւ, զգուշութեամբ վերառաւ նրանց պարկերը, տարաւ թափեց միջի ոսկին մի ապահով տեղ, մանր խճաքարով լցրեց պարկերը և բերեց իրանց առաջուայ տեղը դրեց ու ինքը թաքկացաւ: Եղբայրները վերկացան, վերառան պարկերը և ճանապարհ ընկան դէպի տուն: Կիսլանջն էլ գնում էր նրանց յետևից: Երբոր մեր ապերախտները տուն հասան, դուռը ծեծեցին և ասացին.

«Մայրիկ, մայրիկ, դուռը բաց. վիշապին սպանեցինք, նրա ոսկին պարկերով շալակած այստեղ բերինք»:

Պառաւը ոսկու ձայնը որ լսեց, ուրախ-ուրախ դուրս վազեց, որդիերանցը համբուրեց, ապա շտապեց, մեծ տաշտը բերեց և քնչ դատարկեց.— խիճ: Եղբայրները փայտի պէս սառած մնացին: Այդ րոպէին հերթիցը մէկը ձայն տուեց.

«Մայրիկ, մայրիկ, դուռը բաց.

Վիշապին սպանեցի,

Նորա ձեռքից ես գրրանց

Ողջ ու առողջ փրկեցի.

Բայց գրրանք ինձ խաբեցին.

Ուզելով ինձ սպանել,

Հորի մէջը թողեցին:

Այլ Աստուած ինձ օգնական,

Այն խոր հորից ազատեց.

Դրրանց պատիժն էլ տուեց—

Պարկերը խիճով լըցրեց:

Սակայն գրրանց, մայր, ներիր,

Եւ տանից մի դուրս անիր»:

Մայրը գրկեց բարեսիրտ ու մեծահոգի Կիսլանջին և նրա համար ձուածեղ արեց:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Թ Ռ Չ Ն Ա Կ.

Մանուկներ.

Սիրուն թռչնակ, բռնուեցար,

Յանցից չես ազատուիր.

Ոչինչ բանով աշխարհում

Քեզնից չեսք բաժանուիր:

Թռչնակ.

Ա՛խ, ձեր ինչի՞ն եմ պէտք ես,

Սիրելի մանուկներ.

Թողէք ինձ ազատ թռչեմ,

Բացէք ցանցիս դռներ:

Մանուկներ.

Ձէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ,  
Գու մեզ մօտ կրմնաս.  
Մենք քեզ շաքրէ հաց կըտանք,  
Կ'ուտես կ'ուրախանաս:

Թռչնակ.

Ա՛խ, շաքրէ հաց չեմ սիրում,  
Քաղցրեղէն չեմ ուտում.  
Թողէ՛ք, դաշտի մորեխներն  
Շաքրից լաւ եմ հաշում:

Մանուկներ.

Ա, յետեզ, դաշտում ձմեռը  
Գուցէ ցրտից մեռնես,  
Իսկ մեզ մօտ սսկուց շինած  
Վանդակի մէջ կ'ապրես:

Թռչնակ.

Օ՛, մի՛ վախէք՝ ձմեռը  
Տաք կողմեր կըթչեմ,  
Իսկ բռնուած՝ դրախտն էլ  
Ինձ բանտ կըհամարեմ:

Մանուկներ.

Թռչնակ, թռչնակ, մենք ինչպէս  
Քեզ կըփայփայէինք,

Ձէինք թողնիլ, որ տխրես,  
Միշտ կ'ուրախացնէինք:

Թռչնակ.

Հաւատում եմ, բայց ձեր սէրն  
Ինձ միշտ կըլինասէր,  
Որովհետեւ այդ կերպով  
Աչքս յաւիտեան կըփակուէր:

Մանուկներ.

Ճշմարիտ է, ո՛վ թռչուն,  
Գերութեան չես տանիլ.  
Աստուած քեզ հետ, դէ՛հ, թռի՛ր,  
Ազատ, ուրախ եղիր:

Վ Ե Ր Ձ

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

(Երկրորդ մասի մեջ)

Երէս

- «2»—I. Փետուրէ գրիչ :—II. Հող (բզզան):
- «4»—I. Չուլ :—II. Զուր, գետ :
- «9»—I. Մեղրաճաց (բճիճ) :—II. Կառքի անիւնները :
- «13»—I. Հրացան :—II. Թուր գաշոյն :
- «17»—I. Սեղան :—II. Հեշտայեռ (սամալար) :
- «22»—I. Կրիայ :—II. Փեթակ և մեղրաճաց :
- «27»—I. Թուզը :—II. Հացահատիկներ :—III. Նուշ :—IV. Մանուշակ :
- «30»—I. Ոսկի և արծաթ :
- «34»—I. Բերան, ականջներ, աչեր :—II. Քիթ :
- «42»—I. Բերան և ստամբեր :—II. Չեռներ, ոտներ, մատներ :
- «47»—I. Կարգալ-գրեւ :
- «51»—I. Մարդը՝ մանկական, այրական և զառամեալ հասակում :
- «55»—I. Արեգակ :
- «63»—I. Ճրագ և ճրագակալ :—II. Մոմ :

Գրքերը բաժանելուց առաջ կարևոր է ուղղել հետևեալ սխալները.

Սխալ երես	Տող	Ուղիւ
18 ներքին	6 Հացը	Հաւը
41 վերին	3 չրինի	չրինի
42 "	1 պատուանդան	պատուանդան
55 "	8 չորեքնարթին	չորեքշարթին
63 ներքին	7 թիսէն	քիսէն







4574

2013

« Ազգային գրադարան



NL0062647

